

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

«ՓԻՍ ԷՔՔ»-Ը ՉԻ ԿՐՆԱՐ ԹԵՐԹԵԼ ԱՐՑԱԽԻ ԷՁԸ

Քոնկրետի «Փիս Էքք»-ին առնչությամբ Հայ դատի դիրքորոշումը նենգափոխուած ձեւով կը մեկնաբանուի եւ շրջանառութեան մէջ կը դրուի, յատկապէս հայաստանեան լրատուադաշտին մէջ Հայ դատի համակարգը հարուածելու նպատակով: Արձանագրենք, որ կայ հետեւողական վարքագիծ վարկագրկելու Հայ դատի աշխատանքները՝ զանոնք ներկայացնելով իբր թէ հակապետական աշխատանքներ:

Անկախ անկէ, որ Հայ դատ հասկացողութիւնը այսօր կը ներկայացուի իբրեւ ժամանակավրէյ, առաւելապաշտ եւ «իրական Հայաստան»-ի զաղափարախօսութեան հակադրուած հայեցակարգ եւ համակարգ, կայ ծրագրուած եւ պետական մակարդակի վրայ կիրարկուող քաղաքականութիւն՝ իբր թէ շեշտելու Հայ դատի հակապետականութիւնը՝ ոչ միայն հայրենիքի մէջ, այլ նաեւ հիմա սփռւածի տարածքին տարիամոգելու հասարակութիւնը: Մինչդեռ պետութեան բացակայութեան ամբողջ տասնամեակներուն պարզ է, թէ Հայ դատն է, որ իր կառուցակարգով կիրարկած է բացակայող պետութեան արտաքին քաղաքականութիւնը, յատկապէս Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման առաջադրանքներուն առումով: Հիմա՝ պետութեան ներկայութեան ժամանակահատուածին, Հայ դատը կը շարունակէ իր վրայ վերցնել այն բոլոր գործառնոյթները, որոնք սկզբունքով պետք է իրականացնէր հայկական դիւանագիտութիւնը:

Առանց խորանալու իրաւական մանրամասնութիւններուն մէջ, բացատրենք նենգափոխումի հիմնական առանցքը: «Փիս Էքք»-ը կը խօսի ագրպէյճանական ուժանիւթային կեդրոններու դէմ կիրարկելի պատժամիջոցներու մասին, եթէ Ագրպէյճան խախտէ համաձայնութիւնները եւ դիմէ յարձակումի:

Խնդիրը այն է, որ Միացեալ Նահանգներ կը խօսին հետագային կատարուելիք խախտումներուն մասին եւ միայն այդ պարագային կը սպառնան պատժամիջոցներ կիրարկել: Այս՝ պարզ տրամաբանութեամբ, կը նշանակէ, որ ուաշինկթընեան հռչակագիրին առիթով Ագրպէյճանի նկատմամբ ամերիկեան օժանդակութեան կրճատումի արգելքի վերացումէն ետք հիմա կը յուշուի, որ եթէ ամերիկեան երաշխաւորութեամբ կայացած համաձայնութիւնները խախտէ Պաքոն, ապա իրեն կը սպասեն Նոր պատժամիջոցներ:

Ական կայ այստեղ անշո՛ւշտ: Բանաձեւի պատժամիջոցներ կիրարկելու եւ Պաքոն զգալելու կանխագուշակումը հասկնալի է: Բայց երբ կը խօսուի միայն յառաջիկային կայանալիքներուն մասին, կը ջնջուի ամբողջ թղթածրար մը, որ լի է ռազմական յանցագործութիւններով, ցեղային զտումներով, ցեղասպանական քաղաքականութեամբ, շրջափակումով, սովամահութեան դէպքերով, յարձակողապաշտութեամբ եւ մշակութային ջարդերով:

Նման օրինագիծ մը՝ գգուշացնելու կամ կանխարգիլելու տեսքով, ըստ էութեան կը ջնջէ Նախորդ ամէն տեսակի յանցագործութիւնները, պատասխանատուութենէն դուրս կը բերէ յանցագործը: Այլ խօսքով, կը փակէ Արցախի էջը:

Թէկուզ ոչ լիարժեք առումով, այդուհանդերձ տակաւին հասկնալի կ'ըլլար, եթէ յառաջիկայ յարձակողապաշտութիւնը զսպելու կոչւած այս օրինագիծը կոչ ուղղած ըլլար Պաքոնին՝ իր զօրքերը անմիջապէս հեռացնելու հայաստանեան գերիշխան տարածքներէն, անմիջապէս ազատ արձակելու իր մօտ պահուող ռազմագերիներն ու պատանդները եւ դադրեցնելու հոգեւոր-մշակութային կոթողներու սպանողը:

Երբ չկան այս հիմնադրոյթները, կ'օրինականանան նաեւ այդ բոլորը եւ յանցանք կը նկատուին միայն յառաջիկայի յարձակողական քայլերը:

Այս բոլորն է, որ Հայ դատը կը փոխանցէ: Ոչ թէ դէմ է Ագրպէյճանի յարձակողապաշտութեան զսպումի փորձին եւ նման քայլի պարագային պատժամիջոցներ կիրարկելու, այլ դէմ է այս ձեւով հետագային հաւանական յարձակումներուն դիմաց պատժամիջոցներ գործարդելու խոստումով ըստ էութեան Արցախի էջը փակելուն:

Արցախի էջը չէ փակուած: Հայ դատի աշխատանքները կը շարունակուին. հակառակ՝ այս համակարգին դէմ բացուած համագարկին, եւ հակառակ Արցախի հակամարտութիւնը այս ձեւով փակելու մեծ քաղաքականութեան:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ. « ԼԻԹԱՆԻԷՆ ՀԱՐԱԻ ԲԱՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ԱՅՍ ՏԱՐԵՎԵՐՁԻՆ ՊԻՏԻ ՀԱՄՆԻ ՇՈՒՐՁ 10 ՀԱՁԱՐԻ»

Հանրապետութեան Նախագահ Ժոզեֆ Աուն ընդունեց ՖԻՆԻԼ-ի ուժերու հրամանատար զօր. Տիոտաթօ Ապանիարան եւ անոր յայտնեց, որ Լիթանի գետէն հարաւ լիթանեան բանակի անդամներուն թիւը այս տարեվերջին պիտի հասնի 10 հազար զինուորի՝ իսրայէլեան ուժերու հեռացումէն ետք հարաւային սահմանին վրայ անվտանգութեան ու կայունութեան հաստատման համար: Բանակը նաեւ ՖԻՆԻԼ-ի ուժերուն հետ պիտի աշխատի՝ գործադրելու համար Ապահովութեան խորհուրդի թիւ 1701



որոշումի բոլոր կէտերը, ինչպէս նաեւ ստանձնելու միջազգային ուժերու դիրքերը, երբ սկսին հարաւէ մինչեւ 2027 թուականի աւարտը աստիճանաբար հեռանալ:

Շար.ը՝ էջ 8

ՍԱԼԱՄ ՍԱՅՏԱ ԱՅՑԵԼԵՑ

Վարչապետ Նաուաֆ Սալամ երկէ այցելեց Սալտա:

Ան քաղաքին մէջ կատարած շրջապտույտի ծիրին մէջ առաւօտեան այցելեց թղթական հիւանդանոց, ապա Սալտայի Նաւահանգիստ, աղբերու մշակման կեդրոն, կոյուղիի կայան, Սալտայի սեռայ, Սալտայի քաղաքապետարան եւ Մաքսետ երկրորդական վարժարան:



Շար.ը՝ էջ 8

ԹՐԱՄԺ. «ԻՍՐԱՅԷԼ ՄԵԿ ԽՕՍՔՈՎԱՍ ԿՐՆԱՅ ԿԱՁԱՅԻ ՄԵՁ ԿՈՒԻԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ, ԵԹԷ ՀԱՄԱՍ ՁԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՉՅԱՐԳԷ»

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամի յայտնեց. «Իսրայէլ մէկ խօսքովս կրնայ Կազայի մէջ կռիւը շարունակել, եթէ Համաս զինադարի համաձայնութիւնը չյարգէ»: Այս մասին հաղորդեց «ՍԻ.Էն.Էս.»-ը:

«Կազայէն գերիներու ազատագրումը չափազանց կարեւոր բան էր, եւ Համաս ներկայիս կը միջամտէ եւ կ'ոչնչացնէ թիրտ աւազակախումբերը», նշեց Թրամի:s



ՀՅԳ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՀՔԸՄ-Ի ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԱՁԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԵՃ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի պատուիրակութիւնը կը շարունակէ հայ համայնքի կառոյցներուն իր շըրջագայութիւնը: Այս Նախաձեռնութիւնը առիթ կը ստեղծէ մօտէն ծանօթանալու կառոյցներու գործունէութեան եւ դիմագրաւուած դժուարութիւններուն, ինչպէս նաեւ հիմք կը հանդիսանայ համագործակցութեան հարթակի մը ստեղծումի:

Այս ծիրին մէջ, հինգշաբթի, 16 հոկտեմբեր 2025-ին, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալպանեանի եւ ընկերակցութեամբ

Կեդրոնական կոմիտէի քարտուղար Ճորճ Ռիզորեանի եւ անդամ՝ Նախկին Նախարար Աւետիս Կիտանեանի, այցելեց Հայ բարեգործական ընդհանուր միութեան (ՀԲԸՄ) վարժարաններ, ուր հանդիպում մը ունեցաւ կառոյցի տնօրէն Արա Վասիլեանի, ինչպէս նաեւ կառոյցի կրթական պատասխանատուներուն հետ: Ապա, պատուիրակութիւնը այցելեց Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ, ուր հանդիպում մը ունեցաւ դպրոցի տնօրէն Թալին Օրտողլեանի, ապա նաեւ ուսուցիչներու հետ՝ լսելով անոնց մտահոգութիւնները:

Շար.ը՝ էջ 2

ՔՐԵՄԼԻՆ. «ՓՈՒԹԻՆԻ ՍՈՒՐԻԱ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐԷԿՈՒՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՉՔՐՆԱՐԿՈՒԵՑԱԻ»

Քրեմլին յայտարարեց. «Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին Սուրիոյ Նախագահ Ասմետ Շարիի հետ ընկարկեց Սուրիոյ մէջ ռուսական ռազմակայաններու հարցը»՝ նշելով. «Փութինի Սուրիա այցելութիւնը երեկուան բանակցութիւններուն ընթացքին ընկարկուեցաւ, եւ այսպիսի հրաւերներ կարելի է ուղղել դիւանագիտական խողովակներով»:

ԲՐԻՏԱՆԻԱՆ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՋՆՁԷ ԱՁՐՊԷՅՃԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԷՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Բրիտանիան ամբողջութեամբ կը ջնջէ Ագրպէյճանի եւ Հայաստանի նկատմամբ զէնքի մատակարարման արգելքը: Այս մասին նշուած է Բրիտանիոյ Եւրոպայի եւ Հիսիսային Ամերիկայի հարցերով պետական Նախարար Սթիւըն Տաւրօքի յայտարարութեան մէջ:

Շար.ը՝ էջ 8

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԿԱԼԱՆԱԻՐՈՒԵՑԱԻ

Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս. Պոռնեան երեկ կալանաւորուեցաւ: Փաստաբան Երմէ Սարգսեան յայտնեց, որ դատարանը բաւարարած է ընկնի միջնորդութիւնը՝ կալանք 2 ամիս ժամկետով:

Սրբազանը կը մեղադրուի քրեական օրէնսգիրքի 210-րդ յօդուածի 5-րդ մասով ն ա ի ա տ ե ս ու ա ծ արարքով՝ ընտրական իրաւունքին խոչընդոտելը՝ իշխանական կամ ծառայողական լիազօրութիւնները օգտագործելով, եւ 236-րդ յօդուածի 3-րդ մասով՝ հաւաքներուն մասնակցելուն հարկադրելը՝ կրկին լիազօրութիւնները օգտագործելով:

Շար.ը՝ էջ 8



ԹՐԱՄԺ. «ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՅԱՅՏՆԵՑ, ԹԷ ԻՐ ԵՐԿԻՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՐԻԻՂ ՊԻՏԻ ՉԳՆԷ»



Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամի յայտարարեց. «Հնդկաստանի վարչապետը յայտնեց, թէ իր երկիրը ռուսական քարիւղ պիտի չգնէ, եւ այժմ պետք է Հիւսստանը մղենք ռուսական քարիւղ գնելէ դադրելու»:

Շար.ը՝ էջ 8

ՎԵՐՁԻՆ ԺԱՄ

ԻՍՐԱՅԷԼ ՕԴԱՅԻՆ ԲՈՒՌՆ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՎ ԽԱԽՏԵՑ ՁԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ



Երեկ երեկոյեան ժամը 8:00-էն ետք իսրայէլեան օդուժը շարք մը բուռն յարձակումներ գործեց Հարաւային Լիբանանի Անսար Եւ Չրարիէ գիւղաքաղաքներուն միջեւ գտնուող տարածքին վրայ: Ռմբակոծումներուն արձագանքը լսուեցաւ Սալտայի եւ Իջլիմ հարրուպի մէջ:

Ըստ որոշ տուեալներու, ասիկա զինադադարի համաձայնութեան կնքումէն ետք անոր մեծագոյն ոտնահարումն է:

ՊԵՐՐԻՔ «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ ԺԱՄԿԵՏԻՆ»

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի վերահաստատեց. «Խորհրդարանական ընտրությունները իրենց ժամկետին տեղի պիտի ունենան, եւ անոնց կայացման որոշեալ պահերը չկայ»: Ան այս մասին յայտնեց «Ժուժիուրի» օրաթերթին հետ զրոյցի ընթացքին:

Պատասխանելով արտերկրի լիբանանցիներու քուէարկութեան վերաբերեալ հարցումի մը՝ խորհրդարանի նախագահը ըսաւ. «Ուժի մէջ եղող ընտրական օրէնք մը ունիւք, եւ ընտրութիւնները անոր հիմամբ պիտի կատարուին, ինչ որ կը նշանակէ, թէ քուէարկութիւնը Լիբանանի մէջ պիտի կատարուի, եւ ան, որ կ'ուզէ ընտրութեան մասնակցիլ ու քուէարկել, կրնայ Լիբանան գալ եւ Լիբանանի մէջ քուէարկել»:

Անդրադառնալով Կազայի վերջին զարգացումներուն՝ Պերրի բաւարարուեցաւ ըսելով. «Մեծ բան մը տեղի կ'ունենայ»:

Օրաթերթը կ'աւելցնէ, որ Կազայի համաձայնութեան առաջին փուլին գործադրութենէ ետք, Պերրի համաձայնութեան յաջորդ փուլին նկատմամբ չափազանց զգուշացումներ կը ցուցաբերէ:

Ինչ կը վերաբերի Կազայի համաձայնութենէ ետք Լիբանանի կացութեան, Պերրի «Ժուժիուրի»-ին յայտնեց, թէ մտահոգ չէ եւ համաձայն չէ մէկէ աւելի աղբիւրներէ հնչող մազցումիլ ու Լիբանանի ճակատին վրայ պատերազմի վերաբերեալ բեմադրութիւններուն:

«Բոլոր արժէտներուն մէջ ցոյց կու տան, թէ Կազայի մէջ համաձայնութիւններէ ետք ուշադրութիւնը պիտի կենդանանայ Լիբանանի վրայ: Այս է իրականութեան ամենէն մօտ եղող վարկածը: Սակայն չկան տուեալներ, թէ այս հոլովոյթին մէջ ի՞նչ կրնայ առաջարկուիլ», նշեց խորհրդարանի նախագահը:

ՖԱՏԼԱՆԱ «ՀԱԿԱՌԱՎ ԴՆՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐԱՎԿՈՒՄՆԵՐՈՒՆ, ԼԻԲԱՆԱՆ ԿԱՐՈՂ Ե ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԸ ԴԻՄԱԿԱՅԵԼ»

Հաւատարմութեան դիմադրութեան երեսփոխան Կալապալ Ռաւան Ֆատլաւա յայտնեց, «Կ'անցնինք ժամանակաշրջանէ մը, ուր Լիբանանի եւ շրջանին մէջ բազմաթիւ փոփոխութիւններ կան: Կան զինուորական, ապահովական եւ քաղաքական փոփոխութիւններ, որոնց ճամբով աշխատանք կը տարուի շրջանի, անոր հաւասարակշռութիւններով, յարաբերութիւններով եւ միջեւ իսկ աշխարհագրութեամբ վերածելաւորման:

«Շրջանին մէջ անձնատուութեան շտապող կայ, կարծեք իսրայէլացի թշնամին ամբողջական յաղթանակ արձանագրեց: Այսպիսի աճապարանք 1982 թուականին տեսանք, եւ զայն բազմաթիւ փուլերով ընթացքին տեսանք: Անոնք, որոնք աճապարեցին, յուսախաբ եղան, եւ մենք անոնցմէ ենք, որոնք իրողութիւնները չեն դրժեր, զայն կը տեսնեն ինչպէս որ է, որպէսզի գիտնան ինչպէս առանց չափազանցութիւններու եւ պորոտախօսութեան անոր դէմ դնել», աւելցուց երեսփոխանը:

«Գիտենք, թէ շրջանին ու Լիբանանի մէջ ուժի հաւասարակշռութիւնը խախտեցաւ, սակայն ատիկա չի նշանակեր, թէ սիրական ծրագիրը իր նպատակները իրագործեց եւ յաղթեց: Ո՛չ Լիբանանի, ո՛չ Կազայի, ո՛չ ալ շրջանին մէջ հարցերը վերջ գտած են, եւ ատոր փաստը այն է, որ Լիբանանի մէջ մնացինք եւ կը շարունակենք, որովհետեւ ժողովուրդ ենք», աւելցուց ան:

Ֆատլաւա նշեց, որ հակառակ աղմուկին ու տեղեկատուական քարոզչութեան, «մենք մեր ժողովուրդին ապագայով մտահոգ ենք», «մեր Դիմադրութեան ապագայով մտահոգ չենք, եւ միեւնոյն ժամանակ Լիբանանի մէջ մեր մնայուն կոչն է կացութիւնը հանդարտեցնել: Լիբանանեան կառավարութեան մէջ եւ անկէ դուրս եղող բոլոր ուժերը կարիքը ունին խորհրդածութեան պահուի, իմաստութեան, ողջախոհութեան եւ փոփոխութիւններու սերտման, ինչպէս նաեւ գործակցութեան, յաղթահարելու համար ներկայ փուլը, որպէսզի Լիբանանի մէջ կամ անկէ դուրս որեւէ փոքրիկ փոփոխութիւն լիբանանեան մարմինին մէջ որեւէ տկարութիւն չշահագործէ, եւ այս փոփոխութիւնները ամբողջ երկրի հաշուոյն չըլլան»:

«Լիբանանի մէջ ճիշդ չէ, որ ոեւէ մէկը որեւէ այլ նիւթ բանայ նախքան զինադադարի գործադրութիւնը: Նախ եւ առաջ թշնամին պէտք է յանձնառու դառնայ, ինչպէս Լիբանան յանձնառու դարձաւ, իսկ մնացեալ հարցերը կը բնարկուին զինադադարի գործադրութենէ ետք», ըսաւ երեսփոխանը:

«Հակառակ ճշշումներուն ու իսրայէլեան յարձակումներուն, Լիբանան կրնայ մարտահրաւերները դիմակայել», շեշտեց Ֆատլաւա:

ՄԵԹՐԻՔ «ԼԻԲԱՆԱՆՆ ՈՒ ՍՈՒՐԻԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆՈՐ ՀԻՄԵՐ ԿԸ ԿԱՌՈՒՅԵՆ»

Փոխվարչապետ Թարեք Մըթրիք «Տիար» օրաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց, որ ներկայիս «կը մշակուին լիբանանեւտրիական յարաբերութիւններու նոր հիմքեր, որոնք գլխաւորաբար հիմնուած են երկու պետութիւններու գերիշխանութեան յարգման վրայ, բան մը, որ անցնող յիսուն տարուան ընթացքին չկար»:

«Բոլոր խնդիրները կը քննարկուին, եւ արգիլուած նիւթեր չկան: Աշխատանքը կը կատարուի շինիչ եւ վըստահութեան ամրապնդման ոգիով, եւ ոչ թէ սակարկութեան», աւելցուց ան:

«Սուրիական կողմին հետ քննարկուող զխաւոր թղթածրարը սուրիացի բանտարկեալներու եւ կալանաւորներու թղթածրարն է, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ անհետ կորսուած լիբանանցիներու, սահմանի վերահսկողութեան, զէնքի եւ թմրեցուցիչի մաքսանենգման արգիլման, ինչպէս նաեւ սուրիացի գաղթականներու տունդարձի թղթածրարները, իսկ սահմանագծումի հարցի քննարկումը տեղի պիտի ունենայ հետագայ փուլին», ըսաւ փոխվարչապետը:

«Այժմ վերատեսութեան կ'ենթարկին Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ անցնող տարիներուն ստորագրուած համաձայնութիւնները, մասնաւոր անոնք, որոնք ներառուած են Եղբայրութեան, գործակցութեան ու համակարգման համաձայնագիրին շրջագիծին մէջ: Այդ համաձայնագիրը վերատեսութեան կը կարօտի, որովհետեւ մշակուած է ներկայ պայմաններէն ամբողջովին տարբեր պայմաններու մէջ եւ կը բովանդակէ կետեր, որոնք ի շահ Լիբանանին չեն: Սուրիական ղեկավարութիւնը Լիբանանեւտրիական բարձրագոյն խորհուրդի աշխատանքի առկալման քայլին դիմեց, եւ հաւանաբար լիբանանեան-սուրիական որոշում մը տրուի չեղեալ նկատելու այդ խորհուրդը», յայտնեց Մըթրիք:

«Մենք խնդիր ունինք Լիբանանի մէջ բանտերուն թղթածրարին մէջ, ներառեալ սուրիացի բանտարկեալներու թղթածրարին մէջ: Ներկայիս աշխատանք կը տարուի արդարադատական գործակցութեան համաձայնութեան մշակման վրայ», ըսաւ ան՝ շեշտելով. «Այս թղթածրարին մէջ լու-



ծումները չեն կրնար քաղաքական ըլլալ, այլ արդարադատական լուծումներ, որոնք կը յարգեն մեր կանոններն ու օրէնքները»:

«Այս գծով տարուած աշխատանքին մէջ յառաջընթաց արձանագրեցինք, եւ համաձայնութեան նախագիծի կետերուն մեծամասնութեան շուրջ համաձայնութիւն գոյացաւ, սպասելով երկու երկիրներու կառավարութիւններուն կողմէ անոնց վաւերացման եւ խորհրդարանի հաւանութեան», աւելցուց ան:

«Սուրիական կողմը մեծապէս հետաքրքրուած է սուրիացի բանտարկեալներու թղթածրարը առաւելագոյն արագութեամբ փակելու», ըսաւ ան՝ նշելով. «Իւրաքանչիւր համաձայնութիւն բացառութիւններ ունի, եւ չկայ պետութիւն մը, որ ընդհանրապէս իր մօտ գտնուող բոլոր բանտարկեալները կը յանձնէ, սակայն միջեւ այս պահիս բոլոր բացառութիւններու կարգաւորման շուրջ համաձայնութիւն չէ գոյացած»:

Անդրադառնալով հանրապետութեան նախագահ ժողգէ Լուսի Իսրայէլի հետ բանակցութեան վերաբերող վերջին յայտարարութեան՝ փոխվարչապետը ըսաւ. «Նախագահը յստակօրէն նշեց, թէ նախ եւ առաջ Իսրայէլ պէտք է գործադրէ զինադադարի համաձայնութիւնը, մասնաւորաբար հեռանայ լիբանանեան բռնագրաւեալ հողերէն, թշնամական արարքները դադրեցնէ եւ գերինքը ազատ արձակէ, եւ սպիկա որեւէ բանակցութեան նախապայման է»:

«Ինչ կը վերաբերի բանակցութեան ձեւին, ապա կրնայ նախապէս կատարուածին նման Կապոյտ գիծին վրայ ըլլալ, եւ անոր մասնակցին երկու կողմերէն զինուորականները:

Շար.ը՝ էջ 8

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԴ ԼՈՒՐԵՐ

• ԱՐԲԻՐԻՆԵՐ «Անպա Էլեքթրոնիկ»-ին. «Նախագահ Լուսի գնդադ Նետեց շրջանին մէջ խաղաղութիւն

եան իրավիճակին նկատմամբ միջազգային մօտեցումին մէջ նկատառելի շրջադարձներ են, մասնաւոր թրամփին կողմէ նախագահ Լուսիին, անոր պետութեան իշխանութեան տարածման ջանքին հարցով բարձրաձայնուած աջակցութեան լոյսին տակ»:

• ԱՐԲԻՐԻՆԵՐ «Անպա Էլեքթրոնիկ»-ին. «Եթէ Թրամփ կ'ուզէ Իրանին առիթ ընծայել խաղաղութեան բանակցութիւններուն մասնակցելու, հակառակ շրջանին մէջ անոր ամբողջ կատարածին, ինչո՞ւ Իսրայէլէն հա-

փափաքող պետութիւններուն դաշտը, մասնաւորաբար այն պետութիւններուն, որոնք ստորագրեցին Շարմ Շէյխի համաձայնութիւնը՝ նկատի ունենալով, որ Իսրայէլի բռնագրաւած հիւնդ կետերէն հեռանալն ու յարձակումները դադրեցնելը բանակցութեան առաջնորդող քայլեր են»:

• ԴԻԲԱԼԱԳԻՏԱԿԱՆ աղբիւր մը «Անպա» օրաթերթին. «Լիբանանի նկատմամբ ամերիկեան եւ ֆրանսական վերջին կեցուածքները լիբանան-



ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՄԱԿԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Երիտասարդութեան եւ մարմակրթութեան նախարար դոկտ. Նորա Պայրազտարեան ընդունեց ՄԱԿ-ի Առողջապահութեան նախարարութենէն պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէր կազմակերպութեան Լիբանանի գրասենեակի ներկայացուցիչ դոկտ. Ապտի Նասեր Ապու Պաբեր, առողջապահութեան ամրապնդման հարցով թեքնիք պատասխանատու Ռաշա Յամգա եւ տեղեկատուութեան բաժանմունքի պատասխանատու Յալա Յապիպ:

Հանդիպումի ընթացքին նախարարութեան ապագայ ծրագիրներու շուրջ խորհրդակցութիւն ու համակարգում կատարուեցաւ:

Ապու Պաբեր ողջունեց իրաւերը եւ պատրաստակամութիւն յայտնեց գործակցութեան: Անդրադարձ կատարուեցաւ նախարարութեան առաքելութեան եւ նախարարութեան մօտ օրէն գործադրելիք մասնաւորաբար երիտասարդութեան ոլորտին մէջ ծրագիրներուն ու ձեռնարկներուն:

Խորհրդակցութիւն կատարուեցաւ շարք մը ծրագիրներու շուրջ, որոնք վրայ նախարարութիւնն ու կազմակերպութիւնը կրնան միասնաբար աշխատիլ: Պատուիրակութիւնը ողջունեց եւ պատրաստակամութիւն յայտնեց անոնց գործադրութեան համար գործակցելու:

ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ ՅՈՐԱՆԱՆԻ ԹԱԳՈՒՅԻՆ ՀԱՐՑՈՒՄԻՆ՝

«ԱՅՈ՛, ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ԵՐԹԱՄ՝»

Կ'ԸՍԷ ԼԵՒՈՆ ԺՂ. ՊԱՊԸ



Յորդանանի թագուհի Ռանիան չորեքշաբթի օր Վատիկանի մէջ Լեւոն ԺՂ. պապին հետ իր հանդիպումի ընթացքին մտահոգութիւն յայտնեց անոր Լիբանան սպասուող այցելութեան նկատմամբ:

Ընկերային ցանցերուն վրայ տարածուեցաւ տեսերիզ մը, ուր Ռանիա թագուհին պապին կը հարցնէ, թէ Լիբանան այցելութիւնը ապահով է, եւ ան կը պատասխանէ. «Այո՛, պիտի երթամ»:

Վատիկանի տեղեկատուական գրասենեակը 7 հոկտեմբերին յայտարարած էր. «Ընդառաջելով հանրապետութեան նախագահ ժողգէ Լուսի եւ լիբանանեան եկեղեցական իշխանութիւններու, Լեւոն ԺՂ. պապը յառաջիկայ 30 նոյեմբերէն 2 ղեկտեմբեր առաքելական այցելութիւն պիտի տայ Լիբանան»:

ՀՅԳ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Պալապանեան երախտագիտութիւն յայտնեց ուսուցիչներու զոհողութեան համար. անոնք, հակառակ Լիբանանի բոլոր տագնապներուն եւ դժուարութիւններուն, կը շարունակեն նոր սերունդին մէջ հայ



դիմագիծի պահպանման իրենց առաքելութիւնը: Ան յայտնեց, որ հայապահպանման աշխատանքը տարուած է սերունդներ շարունակ, եւ այժմ մեր կարգն է զայն շարունակել, իսկ այդ իրականացնելու լաւագոյն ձեւն է՝ համագործակցութիւնը եւ հաւաքական աշխատանքը:

Տնօրէնները իրենց կարգին բարձր գնահատեցին մեկնարկած այս նախաձեռնութիւնը: Չոյզ հանդիպումները առիթ հանդիսացան շեշտելու համագործակցութեան կարեւորութիւնը եւ քննարկելու այդ ուղղութեամբ քայլերու ձեռնարկելու ձեւերը:

ՀՕՏԻՆ ԵՒ ԿՂԵՐԻՆ ՄԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԿՐԱՆՔԸ ՆՈՒԱՃԱԾ Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱԼՈՅԵԱՆ

«Մարդը պետք է դատել ո՛չ թե իր հնչեցուցած խօսքերով, այլ՝ իր կատարած գործերով»

Ժամանակի փորձությունը անցած այս անհերքելի ճշմարտությունը իր գործնական կիրարկումը ստացավ վերջերս Ղոմի սրբազան քահանայապետ՝ երջանկայինատակ Փրանչեսկոս պապին կողմէ իր եկեղեցանուէր եւ ազգանուէր գործունեութեան եւ այդ ճանապարհին 110 տարի առաջ մարտիրոսացած Մամպտոնի առաջնորդ Իգնատիոս արք. Մալոյեանի պարագային։

Յետմահու կամ յետնահատակութեան հաճոյախօսութիւն չէ, որ կը շռայլենք Ս. Իգնատիոս Մալոյեան անմահ յիշատակին, այլ այդ մասին եղած գրաւոր վկայություններն են, որ կը խօսին։



Համայնքին եւ իրեն վստահուած հօտին անմացորդ նուիրումը աննկատ չէր կրնար մնալ իրեն հաւատացած եւ զինք իբրեւ իրեն առաջնորդ կարգած հանրութեան կողմէ։ Իսկ ան Տիրոջ խաչափայտը ուսին՝ մինչեւ վերջ անխոնջ եւ անտրտունջ տարազայն՝ իբրեւ Տիրոջ ընտրեալ հովիւ, որ դոյզն իսկ չկարանեցաւ կատարելու ի վերուստ իրեն վերապահուած առաքելութիւնը։

Սրբոյ Մալոյեանին վերաբերող արխիւներու շուրջ ուսումնասիրությունները օր ըստ օրէ կը բացայայտեն Մալոյեան սուրբին մարդկային եւ գերմարդկային որակները եւ կ'ապացուցեն, որ քրիստոնեաբարոյ կեանք դառնաժ օտուրը երկրային կեանքի մէջ մահկանացուներու կողմէ ջախջախիչ մեծամասնութեամբ ընտրուեցաւ Մարտին քաղաքի հովիւ, ապա՝ Մամպտոնի արքեպիսկոպոս։

Ստորեւ՝ կը հրապարակենք Մարտինի սուրբին հանդեպ հօտին եւ կղերին տաժած սերն ու համակրանքը ապացուցող փաստաթուղթը։

7 փետրուար 1911
Մարտին

Գերամեծար վարդապետ, սիրելի հայրենեաց եւ թեմին արդի փհանկին վրայ փոքրիկ տեղեկութիւն ունենալու բաղձանքնուդ վրայ անտարակոյս ենք։ Ուստի առ այդ կը փութամ։ Դոգէտոր տիրոջ 23 նոյեմբեր 1910-ի թուականաւ կոնդակին հրամանին համեմատ, թեմին կարեւոր, յարմար եւ վայելուչ հովիւ ընտրելու համար պատուական կղերին եւ ժողովորդեան կողմանէ բարի վկայութեան տուչութիւն ձեռնարկուեցաւ ընդ գահիրիւթեան Մալոյեան Իգնատիոս Ծ. վրդ. պատրիարքական փոխանորդին, առ այդ, կարգեալ է նորին գերերջանկութեան բարձրագոյն հրամանաւ, եւ յունուար 21-ին՝ շաբաթ օրը, Կղերական եւ Աշխարհական ազգային պատկառելի ժողովներուն ներկայութեամբ բարի վկայութեան համար որոշուած եւ պաշտօնական կնիքներով կնքուած արկղը բացուելով՝ 647 տոմսակ համրուեցաւ, ապա լետ կարծանտեւ աղօթից ըստ օրինի տոմսակները կարդացուելով՝ 576 ձայն գերյ։ Մալոյեան ունեցաւ, ապա Թերզիպաշեան Պետրոս՝ 127 ձայն, ապա Թասպագեան՝ 152 ձայն, ապա՝ Դոլդեան Սահակ՝ 143, ապա Բաջունին՝ 126, ապա Նեոմ՝ 120, ապա՝ Գագանճեան Բարսեղ 95, ապա իւր եղբայրը՝ 74, ապա Ֆարքոյեան Տեր Յակոբ՝ 81, ապա հրամանք՝ 48 եւ այլն եւ այլն եւ այլն։ Գերյ։ Մալոյեանի առաքե-



ությունները եւ բարի վկայությունները ընդունելով՝ մարդոջ տաացածը 935 ձայն եղաւ, բարին եւ յաջողութիւնը Աստուծմէ։

Խ. Ծ.
Ս. Գ. Թերզիպաշեան

ՍԱՇՏՈՑ Թ. Ծ. Վ. ԶԱՅԵՐԵԱՆ
Պատրիարքական փոխանորդ
Զմմառու Պատրիարքական կղերի
միաբանութեան եւ Մեծաւոր Զմմառու վանքին

ՍԼԱՔ

ԴԱՏԱՐԿ ԱԹՈՒՆԵՐՈՒ ԱՌՋԵՐ՝ ՄԵՃԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒՆ ՄԵՋ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒ ԱԾԽԱՏԱՆՔԻՆ ԼՈԱԿԵԱՅ ԿԿԱՆ

Հոկտեմբեր ամիսը՝ հայ մշակոյթի ամիսը, պետք է դառնայ լոյսի եւ հոգեւոր հարստութեան տօն։ Ան պետք է համախմբէ մեր միտքն ու զգացումը՝ գեղարուեստի, գրականութեան, երաժշտութեան եւ թատրոնի շուրջ։ Բայց ի՞նչ կը տեսնենք այսօր... Դատարկ աթոռներ՝ անշարժ վկաներ մեր անտարբերութեան։


Շաբաթ երեկոյեան Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբը նոր հնչեղութիւն տուաւ հայ բեմին՝ բեմադրելով խորիմաստ եւ գեղարուեստական ճաշակով կերտուած ներկայացում մը՝ «Մարդը Աթլաթիսին»։ Ներկայացման հեղինակը՝ թատրոնի երախտաւոր Վաչէ Ատրուկին, իր գործով կրկին անգամ հաստատեց, որ հայ թատրոնը կրնայ ըլլալ եւ մնալ մտքի, խղճի ու հոգիի բեմ։

Բեմադրությունները՝ վաստակաւոր բեմադրիչ Յակոբ Տեր Դուկասեանի ղեկավարութեամբ, վկայեց լուրջ մասնագիտական պատրաստութիւն մը, նուիրում եւ նուրբ հաւասարակշռութիւն՝ մտքի ու զգացմունքի միջեւ։ Թատերախումբին անդամները, ոչ արհեստավարժ դերասաններ ըլլալով հանդերձ, փայլեցան իրենց կատարողութեամբ, պարզութեամբ ու անկեղծութեամբ։ Ամէն շարժում, ամէն դիմիք արտայայտությունն կը խօսեր նուիրումի ու հաւատքի լեզուով։

Ամէն ինչ մտածուած էր՝ ձայնէն մինչեւ լուսաւորութիւն։ Լոյսը՝ ճշգրիտ եւ խորհրդանշական, կատարումը՝ մաքուր եւ անխոցելի հայերենով հնչող, իսկ ձեւաւորումը՝ ճաշակով եւ չափաւոր լաւատեսութեամբ կերտուած։

Դերակատարները չխաղացին միայն բեմի վրայ, այլ ապրեցան իրենց դերերը, ապրեցան հայ մշակոյթի հոգին։ Երեկոն իսկապէս վկայեց, որ մեր ժողովուրդը տակաւին ունէր եւ ունի ստեղծելու եւ վերածնելու ուժականութիւն։

Բայց, աւաղ, մեկ բան կը բացակայեր այդ գեղեցիկ



երեկոյին. հանդիսատեսը։

Դաիլիճին մեջ ատեն-ատեն աւելի բազմազան էին աթոռները, բան՝ մարդոջ դէմքերը։ Դատարկ աթոռները կը գոչէին՝ լուռ եւ ամօթալի վկայութեամբ։ Ռ՛ւր էին համայնքի մշակութասէրները, ո՛րք էին անոնք, որոնք կը պարծենան «մշակութային ժառանգութեամբ»։ Կարելի՛ է, որ այսպիսի բարձրորակ բեմադրութիւն մը անցնի գրեթէ աննկատ, երբ իւրաքանչիւր ներկայացում նման է աղօթքի, որուն մէջ հայ լեզուն կը վերածուի պատարագի։

Թատրոնը հայ մարդու հոգեւոր կերպարին հայելին է։ Երբ մենք կը լքենք թատրոնը, կը լքենք նաեւ՝ մեր լեզուն, մեր երազը, մեր հոգեւոր շունչը։ Մշակոյթը չի ծաղկիր անտարբերութեան մէջ։ Թատրոնը կը պահանջէ՝ ներկայութիւն, իսնամբ եւ գնահատանք։

Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբը տարիներ շարունակ իր համեստ, բայց հարուստ աշխատանքով կը պաշտպանէ հայ բեմին պատիւը։ Անհրաժեշտ է քաջալերել, իսնամել նման խումբեր։ Թատրոնը չի պահպանուիր միայն հովանաւորներով, այլ՝ հանդիսատեսով, որուն միջոցով ան կը շնչէ եւ կը գոյատեւէ։

Մշակոյթի ամիսը թող չանցնի լուռ։

Լեցնենք պարապ աթոռները ոչ թէ մարմիններով, այլ՝ հոգիներով։

Գնահատենք նուիրեալները, որոնք լոյս կը բերեն մեր բեմերուն եւ հայրենը կը հնչեցնեն՝ իբրեւ երգ, աղօթք եւ հոգի։

Թատրոնը մեզ կը սպասէ՝ իբրեւ սրբատեղի։

Եթէ իսկապէս կը հաւատանք մեր մշակոյթին անմահութեան, պարտինք կենալ անոր կողքին՝ ո՛չ լուռ թեամբ, այլ՝ ներկայութեամբ։

ԱՅՈՐՈՆ ԾԻՐՏԵՍԵԱՆ



Ի ԶՈՒՐ ԿԸ ՀՆՉԵՆ ԱՀԱԶԱՆԳԵՐԸ ՄԵՐ... (ԿԻԹԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ)



Թարգմանաց սերունդը, ճշմարիտ նորարարներ եղան անոնք, որոնք իւրայատուկ եւ անանց դորշմ, գոյն ու բոյր տուին իրենց դարուն եւ հետագայ բոլոր դարերուն։ Չինեցին հայ հոգին, վառեցին հայուն ազգային գիտակցությունը, իր արժեքներուն հպարտութիւնը տուին անոր, եւ յաւերժութեան պայքարի եւ յաղթանակի վստահությունը ներարկեցին անոր արեան մէջ։

ԶԱՐԵՅ ԱՐԸ. ԱՇԽԱՌԵԱՆ

Ընդունուած է ըսել, ե՛ւ՝ արդարօրէն, որ իւրաքանչիւր կրթական վերամուտ իր մէջ կը պարփակէ հպարտութեամբ յագեցած խորհուրդ մը, որ կը վերաբերի՝ ազգային մեր կառնուցածքին, պատկանելիութեան եւ գոյավիճակին։

Եթէ երբեք ամէն կրթական վերամուտ լոյսի, յոյսի եւ ապագայատեսիլ վճիտ վկայութիւն մըն է՝ պահելու եւ պահպանելու հաւաքական արժեքները, ազգային ըմբռնումներն ու հայու տեսակը, այլապէս ալ հայ վարժարանին վերապահուած մարդակերտումի առաքելութիւնը օր ըստ օրէ կը զգենու աւելի քան հրամայական ու անյետաձգելի պահանջ, պարզապէս որովհետեւ կեանքի թաւալքն ու մեր ժամանակի կենցաղակերպն ու գիտական նուաճումները անարգել կ'արշաւեն ու կը սպառնան ամէն հաւաքականութեան, որ ջատագով է տեր կանգնելու՝ իր դիմագիծին, լեզուին, մշակոյթին եւ պատմութեան։

Միւս կողմէ, սակայն, անփոխարինելի հայ վարժարանը, որ ամբողջ սփիւռքի տարածքին կը դիմագրաւէ զանազան տեսակի մարտահրաւերներ, դժուարութիւն եւ լինելութեան հարցեր, իր կարգին, պետք է որ քայլ մը անդին յառաջանայ, յանդուգն ուսում մը ընէ, ինքնանորոգման գործընթաց մը որդեգրէ Եապէս բարեւաւելու իր կրթականի, վարչականի, կազմակերպականի առընթեր, նաեւ տեսլականի հարցերը, անշուշտ, պահելով իր առաքելութեան իմաստն ու թելադրականութիւնը, ոգեկան արժեքներն ու հայաբոյր մթնոլորտի սնուցումը։

Այո՛, ըսել ուզուածը այն է, որ հայ վարժարանը ա՛լ «պարտաւոր» է, պէտք է մրցակից դառնայ տեղական թէ օտար վարժարաններու, որոնք ամէն ծիգ կը թափեն «որսալու» առաւել թիւով աշակերտութիւն՝ պարզապէս հրամցնելով բազում տեսակի ծրագիրներ եւ կրթական նորարարություններ։

Առանց ստորագնահատելու հայ վարժարանի պայծառ գործունեությունը՝ վերելի նշուած մտահոգութեան առանցքը հայ աշակերտներու օտար վարժարան յաճախելու տակաւ աւելցող թիւն է, որ կը սպառնայ՝ գաղութահայ մեր կեանքին ու դիմագիծին, եռանդին ու կենսունակութեան։

Փաստօրէն, ինքնախաբէութիւնը, ամէն ինչ վարդազոյն տեսնելու մօտեցումը, պատասխանատու մակարդակի անտարբերութիւնը, հաւաքական ընդարմացումն ու հոգելիւումը, բայց մանաւանդ առկայ դաժան մտահոգութեանց ու հարցերու վրայէն ցատկելու (փոխանակ դարմանելու) տգեղ սովորությունը պատճառ կը դառնայ անկանխատեսելի եւ վատառողջ կացութեան յամեցումին։

Արդ, գաղտնիք մը յայտնած կ'ըլլանք, եթէ ընդգծենք, որ հայ վարժարաններու ուժեղացումը կ'ենթադրէ՝ գաղութահայ կեանքի վերականգնում, վերաշինուածքում եւ վերակազմակերպում։

Իսկ առանց հայ վարժարանի գոյութեան՝ ա՛լ ինչ խօսք հայ կեանքի, տեսակի ու գոյապայքարի յարատեւութեան մասին։ Աւելի՛ն. ինչի՞նք կը ծառայեն, ի՞նչ իմաստ ունին՝ սրտցաւ յորդորները, քարոզները, խոհանոցային խօսքերն ու սեմինարները։

Թարգմանաց սերունդը։ Լորդեօք բաւարար է երախտագիտութիւն յայտնել մեր մեծագոյն հանճարին՝ Մեսրոպ Մաշտոցին, որ աւելի քան 1600 տարի առաջ յաջողեցաւ՝ հայու տեսակը ստեղծել, հայ մտքին ուժեղ կառնուցածքը բացայայտել, ինքնութեան փայլքը ապահովել, ինքնավստահութեան ջախջ ընցավառել, ազգի մը ներկան ու ապագան հունաւորել։

Թե՛ ազգային բարձրագոյն գիտակցությունն ու հաւատամքը մեզ՝ ազգովին կը պարտաւորեցնէ, որ խոնարհիմք իր ոգեղէն ներկայութեան դիմաւ, հանձնարել իր սրբատաշ շիրմաքարը եւ հպարտութեամբ լիացած՝ շարունակել ազգային երթը։

Ազգային երթ, որ անմիջական կարիքը ունի վերանայման, վերաշրջողման ու յստակ գործընթացներու որդեգրման, որպէսզի հաւաքական մեր կեանքին ու որակին աւիւն ներարկենք եւ մօտիկ ապագայի աշխատանքները արդիւնաւորեն։

Մեսրոպ Մաշտոց իր գիտնականի պահուածքով եւ աշխատանքով յաջողեցաւ ոչ միայն սեփական ազգի գոյատեւման գէլքը ստեղծել, այլեւ հզօր պատուանդան եւ ամրակում ամպին հանդիսացաւ հետագայ սերունդներու, իրենց կարգին, նուաճելու քաղաքակրթական հարթակներ, ամրապնդելու ազգային նկարագիրը, լծուելու շէն ու ինքնահաստատ քայլերու, բայց մանաւանդ՝ սեզ ճակատով դիմակայելու ազգակործան ամէն որոգայթօ ու մարտահրաւեր։

Մատնանշումին լաւագոյն ապացոյցը հանդիսացան՝ ատենի հայ քաղաքական ու եկեղեցական շրջապատի անմնացորդ աշակցությունը, գնահատման ու թիկունք կանգնելու պատրաստակամութիւնը։ Փաստօրէն, Վռամշապուհ թագաւորն ու հայոց Սահակ Պարթեւ կաթողիկոսը եղան այն անձնաւորությունները, որոնք չզլացան, այլեւ օժանդակեցին, որ հայոց իմաստուն Ոստւցապետը կարենայ իր լրումին հասցնել սրբազան առաքելությունը։

Առաքելութիւն, որ իրաւամբ կոչուեցաւ Ոսկեդար։

Այսինքն՝ հայ ժողովուրդի ծնունդ, զարգացում եւ ինքնահաստատում։

Այլեւ՝ ինքնարժեւորում հայ գիր ու գրականութեան, դպրոցներու հաստատման եւ համալսարանական սերունդի պատրաստութեան։

Աւելի՛ն. թարգմանիչներու, ուսուցիչ-դաստիարակներու տարածման։

Արդար է ընդգծել, որ Ոստւցապետին աշակերտները՝ Կորին, Տէրիշէ, Եզնիկ Կողբացի, Ղեւոնդ Երեց, Մովսէս Խորենացի, Դաւիթ Անյաղոյ ու շարժատեր եղան այն յենասիւնները, որոնք թարգմանչական եւ ստեղծագործական իրենց աշխատանքով իր լրումին հասցուցին Մեսրոպ Մաշտոցի սրբազան առաքելությունը։

Առաքելութիւն, որ յատկանշուեցաւ հայ վարժարաններու տարաւմով, ուր ազգի զաւակները պիտի դաստիարակուէին **հայախօսութեամբ**, պարզապէս

ՀԱՄԱԲԻԿ ԳԻԼԱՆԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 6



ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
ԵՐԵՔ ԳԻՐՔԵՐՈՒՄ՝
«ԲԱԺԱԿ ՄԸ ՍԵՐ», «ԿԵԱՆՔ
ՈՒ ԿԱՐՕՏ-ԵՐԱԶ ՈՒ ՍԵՐ»
ԵՒ «ՆՈՐ ՀԱՅԵՐԳՈՒԹԻՒՆ»
ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ



Հովանաւորութեամբ ԲԲԸՄ-ի Լիբանանի Շրջա-
նակային յանձնաժողովի ատենապետ Ժերար Թիւ-
ֆէնքճեանի, ուրբաթ, 10 հոկտեմբերի երեկոյեան
Ժամը 8:00-ին ԲԲԸՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին Բ.
յարկի սրահին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ
բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, հրապարա-
կագիր եւ հրապարակախօս Համբիկ Մարտիրոս-
եանի երեք գիրքերուն՝ «Բաժակ մը սեր», «Կեանք
ու կարօտ-երազ ու սեր» եւ «Նոր հայերգութիւն»,
շնորհահանդէսը:

Ձեռնարկի բացման խօսքը արտասանեց ԲԲԸՄ-ի
«Խօսնակ» մշակութային յանձնախումբի անդամ
Անետիա Տիպան, որ հաստատեց ձեռնարկին կա-
րեւորութիւնը՝ շեշտելով, որ երեկոյն իր ամբողջա-
կան բովանդակութեամբ նուիրուած է Թարգման-
չաց տօնին:

Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի հիմ-
նադիր Նախարար Հրանտէշ Յակոբեանի սրտի
խօսքը՝ նուիրուած բանաստեղծ Համբիկ Մարտի-
րոսեանի շնորհահանդէսին, կարդաց Մարալ Արնէ-
լեան: Հ. Յակոբեան իր խօսքին մէջ կ'անդրադառ-
նար բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, հրա-
պարակագիր եւ խմբավար Համբիկ Մարտիրոսեա-
նի անձին, գործին, աւանդին եւ անոր վերջերս
հրատարակած երեք գիրքերուն մասին՝ տալով յա-
տուկ գնահատական:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Մեծի Տանն Կիլի-
կիոյ «Արամ Ա. հայագիտական հիմնարկ»-ի տնօ-
րէն Ահարոն Շըխըրտըմեան, որ անդրադարձաւ՝
Համբիկ Մարտիրոսեանի կեանքի անցած երկար
ճակատարին, անոր ազգային, միութենական,
եկեղեցական բնագաւառներէն ներս ունեցած բե-
ղուն գործունեութեան, թուարկելով անոր ծառայու-
թիւնները՝ որպէս ուսուցիչ, տնօրէն, դիւանապետ,
խմբավար, ինչպէս նաեւ՝ գրական ու լրագրական
ասպարեզներէ ներս ունեցած ձեռքբերումները:

Ապա ելոյթ ունեցաւ «Ազդակ» օրաթերթի խմբ-
բազմապետ եւ տնօրէն Շահան Գանտահարեան,
որ կարելորեց բանաստեղծ-արձակագիրին որպէս
«Խօսնակ» պաշտօնաթերթի խմբագիր ունեցած
բազմամյայ ծառայութիւնը (19 տարի)՝ շեշտելով
անոր թէ՛ խմբագրականներուն եւ թէ՛ առանձին
հրապարակագրութեան մէջ ունեցած խիզախ կե-
ցունածները, եւ իր իւրայայտուկ տեսակէտները հա-
մարձակօրէն արտայայտելու եղանակը:

Ազգային վարչութեան ատենապետ Գրիգոր
Արսլանեան իր սրտի խօսքին մէջ անդրադարձաւ
բանաստեղծ Համբիկ Մարտիրոսեանին հետ իր ու-
նեցած երկար տարիներու ծանօթութեան, բարե-
կամութեան, անոր տարած միութենասուրբ ու ազ-
գանութիւն ծառայութեան եւ բազմաթիւ բնագաւառ-
ներէ ներս անոր արձանագրած յաջողութիւններուն
մասին՝ առանձնացնելով ԲԲԸՄ-ի «Ահրամճեան»
կեդրոնը եւ հոն իրագործուող նախաձեռնութիւննե-
րը, որոնց թիւը արդէն հասած է 155-ի:

Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք.
Փաւոսեան գնահատեց կատարուող նախաձեռնու-
թիւնը՝ յայտնելով իր ուրախութիւնը եւ մաղթեց, որ
շարունակական ըլլան նման պատուաբեր եւ ուրա-
խացնող երեկոյններ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հատորներուն շնոր-
հահանդէս գինեճօնը:

Հանդիսութեան ւարտին ԲԲԸՄ-ի Շրջանակա-
յին յանձնաժողովին անունով Սիլվա Լիպարիտեան
յուշանուէր մը յանձնեց բանաստեղծ, «Խօսնակ»
պաշտօնաթերթի խմբագիր Համբիկ Մարտիրոս-
եանին, որ հանդէս եկաւ շնորհակալական եւ
երախտագիտական խօսքով:

Յայտնենք, որ ձեռնարկի ընթացքին գործա-
դրուեցաւ գեղարուեստական յայտագիր: Ելոյթ ու-
նեցան սաքսոֆոնահար Սարո Մարտիրոսեան, որ
մեկնաբանեց «Չքնաղ երազ»-ը՝ ընկերակցու-
թեամբ դաշնակահար Համբիկ Մարտիրոսեանի,
Նայիրի Արնէլեան՝ շուի եւ Նանօր Արնէլեան՝ դաշ-
նամուր մեկնաբանեցին «Տաղ յայտնութեան»-ը,
Անի Եփրեմեան արտասանեց բանաստեղծ Համբիկ
Մարտիրոսեանի «Եռաբլուր» բանաստեղծութիւնը,
Միրէյ Զիւթիքճեան մեկնաբանեց «Հարաբաղի եղ-
նիկ» եւ «Ծիրանի ծառը» երգերը՝ ընկերակցու-
թեամբ դաշնակահար Մարալ Արնէլեանի, Համբիկ
Մարտիրոսեան նուագեց երաժշտական կտոր մը,
Լիանա Ամիրխանեան արտասանեց Համբիկ Մար-
տիրոսեանի «Սիրէ՛ հայն ու Հայաստան» քերթուա-
ծը, Գրիգոր Արնէլեան սաքսոֆոնի վրայ նուագեց
երաժշտական կտոր մը, «Շողերգ» երգչախումբը՝
խմբավարութեամբ Համբիկ Մարտիրոսեանի, դաշ-
նակի ընկերակցութեամբ Թորոս Հալաճեանի, մեկ-
նաբանեց «Երիտասարդական քայլերգ», «Իմ սի-
րուն երկիր», «Հէյ ջան Երեւան», «Մենք ենք մեր
սարերը», «Հարալու», «Հոյ նազան», «Նիւսօ», «Սա-
րի ծաղիկ» եւ «Հայեր, միացե՛ք» երգերը:

ԿԱԶԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԻՍԿԱՊԷ՞Ս ԱՒԱՐՏԱԾ Է

(ԲԱՅՑ Ո՞Վ Է ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՉՈՒԶՈՐԸ)

Անցեալ շաբթուան երկրորդ կէսէն սկսեալ եւ մօ-
տաւորապէս հինգ օր տարօրինակ տօնահանդէս մը
տեղի ունեցաւ Միջին Արեւելքի մէջ՝ «Կազայի պատե-
րազմին աւարտ»-ի յայտարարութեամբ եւ ընկերակ-
ցող դրական քայլերուն լոյսին տակ: Նախ ի յայտ
եկաւ, որ ճակատող կողմերը՝ Իսրայէլ եւ Համաս,
վերջնական համաձայնութեան հասած են պատե-
րազմի դադրեցման թրամփեան նախագիծին կէտե-
րէն շատերուն շուրջ, նախագիծ մը, որուն առաջին
բաժինը իրագործման դրուեցաւ երկուշաբթի, 13 հոկ-
տեմբերին (պատերազմի նորագոյն փուլին պայթու-
մէն 2 տարի եւ 6 օր տեք) պատանդներու եւ բանտար-
կեալներու փոխանակումով, ինչպէս նաեւ՝ իսրայէլ-
եան բանակին Կազայէն մասնակի նահանջով: Դրա-
կան այս կէտերուն ընկերակցեցան բռնազաղուած
կազաքիներու զանգուածային տուղարձը, սովա-
հար բնակիչներուն անմիջական նպաստներու
(սնունդ, դեղ...): առաքումներուն մեկնարկը (նկատելի
էր, որ նպաստներու բաշխումը չափազանց անկազ-
մակեալ էր, բեռնատարներէ՝ անդանիւթի սնտուկ-
ներ սպասող մանջահարներուն կը նետուէին փողոց-
ներու մէջ, մաս մըն ալ կ'իյնար ցէխի մէջ):

Տօնահանդէսին միւս երեսը կազմեցին Միացեալ Նահանգնե-
րու նախագահին Իսրայէլ ու Եգիպտոս շրջապոյտը եւ եգիպ-
տական Շարմ Շէյխ քաղաքին մէջ «պատմական գերաստիճան»-ի
մը գումարումը: Այս իրողարձութիւնները ողողեցին միջազգային
լրատու աղբիւրներու հաղորդումները, մանրամասնութիւնները
արդէն հասած են աշխարհի չորս ծագերը, շարունակուող մեկ-



գուրկները չշարունակէն վրանաբնակի կեանքը), ամբողջ ենթա-
կառոյցներ (որոնց մէջ են շուկաներ, աշխատավայրեր եւ այլն)
քանդուած ու քայքայուած են: Նմանապէս նախնական հաշիւնե-
րով նիւթական վնասը կ'անցնի 70 միլիառ տոլարի սահմանը:
Բազմամիլիոն պաղեստինցիներ որքա՞ն ժամանակի եւ նիւթա-
կան օժանդակութեան պիտի կարօտին, սովի վտանգը ե՞րբ պի-
տի փարատի, որպէսզի վերադառնան տանելի պայմաններու:
Ողբերգութեան յաջորդ փուլ(եր)ը նուազ տառապալի պիտի չըլ-
լայ: Սակայն մէկ բան յստակ է: Անոնց մէջ չկայ «աւերակներու
վրայ ինչպէ՞ս թագաւորենք»-ի հոգեվիճակ...

Յաջորդ օղակները բազմաթիւ են. իսրայէլեան սպանալիքնե-
րը չեն վերցուած: Համաս թէեւ բացայայտ դարձուցած է, որ կըր-
նայ ինքզինք դուրս ձգել Կազայի յաջորդ վարչամեքենայէն, սա-
կայն ատիկա վճռուած հարց չէ տակաւին. անոր զինեալները ար-
դէն իսկ ներկայ են փողոցին մէջ ու կը հսկեն ապահովութեան
պահպանման: Ժամանակի կարօտող հարց է մեռած պատանդ-
ներուն դիակներուն վերադարձը: Անորոշութեան հարցականներ
կախուած են Նոր կազմուելիք վարչամեքենային գլխավերելը:
(Մինչեւ Իսրայէլի հիմնադրութիւնը զայն կառավարած) Բրիտա-
նիոյ Թոնի Դլերը, Թրամփի հովանիին տակ, կը պատրաստուի
դառնալ կառավարիչ, պաղեստինցիներու մէջ համախոհութիւն
չկայ այդ ընտրանքին շուրջ, մինչ այդ տարբեր երկրներէ՝ Միա-
ցեալ Նահանգներէն մինչեւ Եւրոպա եւ հեռավոր ասիական եր-
կիրներու զինուժի վարիչներ իրենց ափերը կը շփեն առաջադըր-
ւած «խաղաղարար ուժ»-ին մասնակցութիւն բերելու պիտո՞ճա-
կով (ո՞չ ոք կը խօսի բացուած Նոր շուկայէն ձեռք բերուելիք շահե-
րու, կարգ մը երկիրներ իրողական կողոպուտի մատնելու հաւա-
նականութիւններուն մասին): Աւելի վտանգաւոր հարցականներ



կը մնան մէկ կողմէ Կազայէն իսրայէլեան ուժերու ամբողջական
հեռացման, ու միւս կողմէ՝ Արեւմտեան ափին նկատմամբ Իսրա-
յէլի աճող պիտո՞ճալիքներուն բռնելիք ընթացքին վերեւ: Թրամփի
խաղաղութեան ծրագիրներով խանդավառուած Մահմուտ Ակ-
պաս մը, որ այլապէս Համասի դիմաց կը կանգնի իբրեւ լուռ կամ
բացայայտ պիտոյեան, շատ ալ վստահ չէ, թէ խոստացուած խա-
ղաղութիւնը արդեօք պիտի կարենա՞յ վերջ դնել դէպի իր հողերը
իսրայէլեան ծաւալումին (բնակարաններու եւ պարտէզներու-հո-
ղատարածքներու բռնագրաւում, հրեական բնակեցման վայրե-
րու բազմացում...), թէ՞ «Երկու անկախ պետութիւններու» բազ-
միցս կրկնուած խոստումները (վերջինը՝ ՄԱԿ-ի կերքին նստաշըր-
ջանին) պիտի մնան խօսքի սահմաններուն մէջ, ու բաղձալի հո-
րիզոնը միշտ ալ հեռու պիտի փախչի դէպի հոն վազողներէն: Ի
վերջոյ, պատմութիւնը կը վկայէ, որ Իսրայէլ որեւէ ատեն չէ յար-
գած իր յանձնառութիւնները, խաղաղութեան, զինադուլի համա-
ձայնութիւններ ունեցած են կարճ կամ երկար կեանք (ատենին
Օսլոյի համաձայնագիրն ալ որակուած էր պատմական, յետոյ
գիտենք, թէ ի՞նչ ճակատագիրի հասան զայն ստորագրողները՝
Ռապին եւ Արաֆաթ), Իսրայէլ միշտ ալ ձեւն ու ինքնարդարաց-
ման պատճառներ հրամցուցած է աշխարհին, թէ ինչո՞ւ կը վերա-
դառնայ պաղեստինցիներու դէմ ճնշումներու, բռնարարներու,
հալածանքի եւ ջարդի-ցեղասպանութեան իր քաղաքականու-
թեան, եւ աշխարհն ալ կու տուած է ոճիրները (օրինակ, այն
տասնամեակները, որոնք երկարած են 2023-ի հոկտեմբերի դար-
ձակետը): Բոլորովին այլ հարց, թէ պատերազմի դադարեցման եւ
որոշ հանգոյցներու լուծման այս սկզբնական քայլերէն ետք ի՞նչ
ճակատագիր կը սպասէ Նեթանիահուին, որ մէկ կողմէ դեմ յան-
դիման կը գտնուի ներքին դատապարտանքներու, բանտ նետ-
ուելու հաւանականութեան, իսկ միւս կողմէ՝ միջազգային ճնշում-
ներու, որովհետեւ անոր ցեղասպանական արարքները չեն կըր-
նար մոռցուիլ (արդեօք պիտի մոռցուի՞ն...) «պատերազմը վեր-
ջացաւ»-ի հաւաստիքներուն բերումով: Հոն ալ պիտի ըլլա՞ն բազ-
մաթիւ, որ միջազգային ատենակերտ լեւոյն կոչէն Իսրայէլի քաղա-
յայտ ոճիրներուն դէմ բողոքներն ու պահանջն վճիռներու ջնջու-
մը...

Ս. ՄԱՅՍԵՐԵՃԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6



նաբանութիւնները ահեղ մրցակցութեան մէջ են իրարու հետ:
Այստեղ կը բաւականանանք արձանագրելով միայն մէկ քանի
ուշագրաւ կետ: Թրամփի Իսրայէլ այցելութիւնը սարքուած էր
այնպէս մը, որ զուգահիւսէ իսրայէլացի ողջ մնացած 20 պա-
տանդներուն ազատ արձակման: Սա առիթ եղաւ, որ իսրայէլեան
խորհրդարանին մէջ Թրամփ եւ Նեթանիահու իրարու գովա-
սանքներ շռայլէն (լրատու աղբիւրներու ոսպնեակներէն չլրիպե-
ցան տեղի ունեցած ցեղասպանական արարքները յիշեցնող ընդ-
դիմադիրներու բողոքի ձայները եւ ամերիկեան չափազանցեալ
միջամտութիւններու դէմ արտայայտութիւնները...): Սպիտակ
տան պետը նախ Իսրայէլի, ապա նաեւ Շարմ Շէյխի մէջ յայտա-
րարեց, որ Միջին Արեւելքի համար «նոր արեւածագ» մը բաց-
ւած է, որ՝ «երեք հազար տարուան տագնապ մը» աւարտին կը
հասնի, եւ շրջանը կը մտնէ խաղաղութեան նոր դարաշրջան: Ան
չմոռցաւ գործակցութեան ձեռք երկարելու Իրանին:

Ո՞չ ոքի ուշադրութենէն վրիպեցաւ, որ ամէլի քան 20 երկիրնե-
րու կառավարութիւններու առաջնորդները համախմբող Շարմ
Շէյխի գերաստիճանէն կը բացակայէին Իրան եւ... երկու ճակա-
տակները՝ Իսրայէլ ու Համաս: Սակայն ներկայ էին՝ Արեւմտեան
ափի Մահմուտ Ակպաթը, Ֆրանսայի Մաքրոնը (կան թերեւս կը
փորձէր լուսարձակները հեռացնել իր կառավարական տագնա-
պէն, որ ամէլի կը սրի օր ըստ օր), Գերմանիոյ Մերքը, Բրիտա-
նիոյ Սթարմըրը, ինչպէս նաեւ՝ Թուրքիոյ Էրտողանը, Ազրայէլճա-
նի Ալիեւը, Հայաստանի Փաշինեանն ու Փաքիստանի Շարիֆը (եւ
ուրիշներ): «Խաղաղութիւն 2025» նշանախօսքով համախմբը-
ածներ գովասանքներ շռայլեցին Թրամփի, կարծեք թէ ամոքելու
համար անոր խո՞ր վիշտը՝ Նոպէլեան խաղաղութեան մրցանակը
շահած չըլլալուն պատճառով:



ՏՕՆԱՅԱՆԴԵՍԵՆ ԵՏԶ

Խօսքի հրավառութեան իրերայաջորդ փուլերէն ետք, երբ տօ-
նահանդէսին դուռերը փակուին, օղջ նետուած փայլուն ժապա-
ւէնները գետին իջնէն, ու ամէն մարդ տուն դառնայ, աշխարհը
պիտի տեսնէ, թէ իսկապէս որքա՞ն ՇՕՇԱՓԵԼԻ դրական բան
իրականացած է, որքա՞ն հարցականներ կը մնան օղէն կախուած
ու կրնան մասնակի կամ առաւել չափով պաղ ջուր խառնել տաք
աւարերին մէջ: Բնական է, որ մարդիկ գրաւ դնեն, թէ դրական ըն-
թացքը շարունակուի:

Կազայի իրողական տագնապը կը մնայ ամէնէն ցաւալի (եւ
մեծ հարցականներ դիմագրաւող) երեսը եւ ունի քանի մը օղակ:
Կազաքիք ունեցած են ամէլի քան 67 հազար մարդկային անդառ-
նալի կորուստ (սա պաշտօնական թիւն է միայն), բազմապատիկ
վիրաւորներ (ներառեալ՝ հաշմանդամներ), ըստ մասնակի վիճա-
կարութիւններու, ամէլի քան 500 հազար բնակարաններ քան-
դուած ու աւերուած են (միայն մէկ փոքր մասը բնակելի կրնայ
դառնալ նախնական Նորոգութիւններով, որպէսզի բոլոր տնա-

ՈՒՎՇԻՆԿԹԸՆԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆ ԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (Գ.)

2025 թ. օգոստոսի 8-ի ուաշինկթընեան պայմանադրութիւնների թերեւս ամենաառաւելայական կէտը ԵԱՀԿ Մինսքի խմբի լուծարման էր վերաբերում: Նոյն օրը ԱՄՆ նախագահի վկայութեամբ, Հայաստանի ու Ազրայէճանի ղեկավարների կողմից ստորագրուած համատեղ իրազեկագրի քաղաքական հիմքով, բայց որա ստորագրումից առաջ, Հայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործերի նախարարները ԵԱՀԿ-ին ուղղուած համատեղ դիմում են ստորագրել՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի գործընթացների եւ առնչւող կառոյցների փակման վերաբերեալ:

Արդէն սեպտեմբերի 1-ին ԵԱՀԿ քարտուղարութիւնը հաղորդագրութիւն տարածեց առ այն, որ ԵԱՀԿ նախարարական խորհուրդը մասնակից 57 պետութիւնների համախոհութեամբ որոշում է ընդունել դադարեցնելու ԵԱՀԿ Մինսքի խումբն ու կից կառուցակարգերը: Միայն զուտ վարչարարական գործառնութեան կը շարունակուեն մինչեւ 2025 թ. դեկտեմբերի 1-ը՝ զոյգի եւ սարքաւորումների փոխանցում աւարտելու համար:

ԵԱՀԿ Մինսքի խումբը լուծարուեց Ազրայէճանի տեւական պահանջների եւ Հայաստանի իշխանութիւնների հերթական զիջման արդիւնքում:

Ազրայէճանը ԵԱՀԿ Մինսքի խմբի լուծարումը սկսել էր պահանջել դեռեւս 2023 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Արցախում կատարուած ցեղային գտումից յետոյ, Հայաստանի համաձայնութիւնը այս պարագայում եւս ձեռք է բերուել Ազրայէճանի կողմից ուժի սպառնալիքի եւ որա կիրառման պայմաններում:

1992 թուականին ձեւաւորուած ԵԱՀԿ(Հ) Մինսքի խմբի ստեղծման նպատակն, ըստ Էութեան, հակամարտութեան քաղաքական լուծումը գտնելն էր, այդպիսով նաեւ՝ արցախահայութեան իրաւունքների իրացումը երաշխաւորելը: Աւելի ուշ, 1995 թ. յստակեցուած ԵԱՀԿ Մինսքի խմբի մանտաթը, ի թիւս այլնի, 3-րդ կէտով նախատեսում էր. «Հինուած հակամարտութեան դադարեցման վերաբերեալ քաղաքական համաձայնագրի կնքում»: Ըստ Էութեան, այս գործընթացի առաջնային նպատակներից մէկը Արցախի հայերի իրաւունքների ու անընդունաւորութեան ապահովումն էր: Ազրայէճանի 2020 եւ 2023 թուականների ռազմական գործողութիւնները, ցեղասպանական ցեղային գտումները աւելի են խորացրել հակամարտութեան հետեւանքները: Աւելին՝ Արցախի բնակիչները շարունակում են համակարգուած կերպով բախուել իրենց առանցքային իրաւունքների խախտումներին:

Հետեալաբար ԵԱՀԿ-ն եւ լայն միջազգային հանրութիւնը չեն կարող հրաժարուել իրենց մանակցութիւնից: Հակամարտութիւնը պահանջում է շարունակական միջազգային ուշադրութիւն եւ միջնորդութիւն՝ հիմնուած միջազգային իրաւունքի, արդարադատութեան եւ դիւանագիտութեան վրայ: Միայն այս սկզբունքների միջոցով հնարաւոր է հասնել իրական, կայուն խաղաղութեան տարածաշրջանում:

ԵԱՀԿ Մինսքի խմբի ձեւաչափը կարող էր զուգէ թուլացած լինել, բայց այն սկզբունքները, որոնց հիման վրայ այն հանդէտ էր գալիս՝ իրական բազմակողմանիութիւն, ներառական երկխօսութիւն եւ միջազգային միջնորդութիւն, մնում են անհրաժեշտ: Այդ սկզբունքներից հրաժարումը համընդհանուր անկայունութեան շրջանում ուղերձ է փոխանցում առ այն, որ ուժն է որոշում հակամարտութիւնների լուծումը, ոչ թէ՝ միջազգային կարգը: Պետութեան քաղաքականութեան գործիք դարձած ուժի գործածման օրինակնառումը բերելու է ոչ թէ կայունութեան, այլ հետագայում եւս երաշխաւորելու է տարածաշրջանի բռնութեան անվերջանալի շրջապտոյտ, ինչն իր հերթին յանելալ խախտելու է միջազգային իրաւունքի ու դիւանագիտութեան հիմնասիւնները:

Այսպիսով, ի կատարումն ազրայէճանական պահանջի, ինչն, ի դէպ, ուաշինկթընեան պայմանադրութիւնների թերեւս միակ գործնական դրոյթն էր, ի ղեմն Մինսքի գործընթացի լուծարման, հիմնական քաղաքական առաջնահերթութիւնը, որ պէտք է հետապնդեն հայկական շահերի պաշտպանութեամբ զբաղուող կազմակերպութիւնները, դարաբաղեան հակամարտութեան շարունակական միջազգայնացումն է, խնդիրը ամէն կերպ միջազգային օրակարգի վրայ պահելը՝ թէ՛ խորհրդարանական, թէ՛ գործադիր, թէ՛ բազմակողմ հնարաւոր բոլոր հարթակներում:

Ուաշինկթընեան գործընթացի արդիւնքում լուծարուող ԵԱՀԿ Մինսքի խմբի փոխարեն չի առաջարկուում միջազգային այլընտրանքային որեւէ հարթակ՝ առկա բազմաթիւ խնդիրների լուծումը փոխվստահութեան մթնոլորտում քննարկելու համար: Հետեալաբար նման հարթակի ձեւաւորումը եւս պէտք է առաջնահերթը դասել:

Որո՞նք են դարաբաղեան հիմնասիւնորի միջազգայնացման դերակատարներն ու աշխատանքային հիմնական ուղղութիւնները:

Դերակատարները

Ակնյայտ է, որ Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւնները որեւէ կերպ օգտակար չեն լինելու դարաբաղեան հիմնասիւնորի միջազգայնացման աշխատանքներն, ուստի նախ եւ առաջ պէտք է նոյնականացնել այն կազմակերպութիւններին, որոնք կարող են ծանր ու դժուարին այս աշխատանքն իրականացնել՝ միջազգային յարաբերութիւններում բաւական անբարենպաստ պայմաններում: Այդպիսի կազմակերպութիւններ կան ինչպէս հայրենիքում, այնպէս էլ յատկապէս սփիւռքում: Նման ուժերը նախ եւ առաջ համահայկական կազմակերպութիւններն են՝ Հայաստանեայց առաքելական տուրք եկեղեցին, Հայ դատի միջազգային ցանցը, աւանդական կուսակցութիւնները կրօնքը, որոնց համար հակամարտութիւնն աւարտուած չէ, Հայ բարեգործական ընդհանուր միութիւնը՝ Եթէ ոչ զուտ քաղաքական, ապա կրթարաստիարակչական առումով՝ յիշողութեան ու պայքարի ոգին բարձր պահելու տեսանկիւնից, սփիւռքում գործող մասնագիտական միաւորումները, տարբեր հիմնադրամներ, ուղեղային կեդրոններ (think tank) եւ այլն:

Այս առումով, առանցքային դերակատարութիւն ունեն յատկապէս Արցախի իշխանութիւնները եւ ԱՀ Ազգային ժողովի կողմից 2023 թ. դեկտեմբերին ստեղծուած «Արցախի ժողովրդի հիմնարար իրաւունքների պաշտպանութեան հարցերով



յանձնախումբը», ուստի այս կառոյցներին մշտական օժանդակութիւնը նոյնպէս չափազանց կարեւոր է՝ արցախահայութեան պահանջների միջազգային օրինական ներկայացման տեսանկիւնից:

Գործունեութեան ուղղութիւններ

ԵԱՀԿ Մինսքի գործընթացի լուծարման պայմաններում հայկական շահերի պաշտպանութեան եւ հակամարտութեան հետագայ միջազգայնացման տեսանկիւնից կարելի է առանձնացնել գործունեութեան հետեւեալ ուղղութիւնները:

Միջազգային դատական ատենաներ

Արդարադատութեան միջազգային դատարանը, Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը, ինչպէս նաեւ Միջազգային քրեական դատարանը առաջնային իրաւական հարթակներն են, որտեղ պէտք է հետապնդել դեռեւս ընթացքի մէջ գտնուող դատական գործերը, աւելացնել նորերը, իսկ Հայաստանի իշխանութիւնների կողմից՝ դատական հայցերը յետ քաշելուց յետոյ պէտք է ապահովել անհատական կամ խմբային գանգատների ներկայացում: Այս առումով, յատկապէս՝ հայ գերիների պաշտպանութեան տեսանկիւնից, արդէն իսկ Եաւկան աշխատանք է կատարուել Հայ դատի համակարգում գործող Հայկական իրաւական կեդրոնի (Armenian Legal Center) ու Միջազգային եւ համեմատական իրաւունքի հայկական իրաւական կեդրոնի կողմից:

Միջազգային դատական ատենաներում մեր խնդիրների հետապնդման տեսանկիւնից առանցքային կարեւորութիւն եւ հիմնարար նշանակութիւն ունի Արդարադատութեան միջազգային դատարանի 2023 թ. նոյեմբերի 17-ին միջանկեալ միջոցի ապահովման մասին որոշումը, որն Ազրայէճանին պարտաւորեցնում է ապահովել արցախահայութեան վերագործի եւ յարակից իրաւունքների իրացումը:

Միջազգային կազմակերպութիւններ

Ինչպէս վերն ակնարկուեց, ԵԱՀԿ Մինսքի խմբի լուծարումից յետոյ միջազգային առաջնային հարթակները, որտեղ պէտք է հետապնդել արցախահայութեան իրաւունքների պաշտպանութեան եւ իրացման խնդիրը, ՄԱԿ-ն է իր համապատասխան մարմիններով, առաջին հերթին Մարդու իրաւունքների խորհուրդը, ապա նաեւ՝ ԵԱՀԿ-ն, որոնք կանոնադրային պարտականութիւն ունեն զբաղուելու նմանաբնոյթ խնդիրներով:

Սակայն պէտք չէ աչքբաթող անել միջազգային այլ կառոյցները եւս, յատկապէս նրանք, որոնք ազդեցութիւն ունեն տարածաշրջանային քաղաքականութեան վրայ: Այս տեսանկիւնից կարելու է աշխատանքը եւրոպական Միութեան ղեկավար կառոյցների՝ Եւրոպական խորհրդարանի, Եւրոպական յանձնաժողովի, Խորհրդի եւ ԵՄ խորհրդի հետ: Եւրոպական խորհրդարանի վերջին տարիներին ընդունած տասնեակ բանաձեւեր առարկայօրէն հիմնաւորում են ընդունում եւս արցախահայութեան իրաւունքների, այդ թուում վերագործի իրաւունքի իրացման խնդիրը: Եւրոպական խորհրդարանի խիստ հետեւողական այս դիրքորոշումը Եաւկան ազդեցութիւն է ունեցել նաեւ ԵՄ գործադիր իշխանութեան վրայ, ինչի պայմաններում ԵՄ Ե՛ւ օրէնսդիր Ե՛ւ գործադիր իշխանութեան մարմիններն ընդունում են, որ հակամարտութիւնը, ըստ Էութեան, լուծուած չէ:

Միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններ

Միջազգային խոշոր իրաւապաշտպան կազմակերպութիւնների հետ յարաբերութիւններին նոյնպէս պէտք է պատշաճ ուշադրութիւն դարձնել, մասնաւորապէս՝ այնպիսի կազմակերպութիւններ, ինչպիսիք են՝ «Human rights watch»-ը, «Amnesty International»-ը, «Freedom House»-ը եւ այլն: Այս առումով, խիստ արժեքաւոր է 2024 թ. «Freedom House»-ի եւ գործընկեր մի շարք միջազգային կազմակերպութիւնների կողմից պատրաստուած՝ «Ինչո՞ւ. Լեռնային Ղարաբաղում հայեր չկան» վերնագրով լայնածաւալ փաստահաւաք զեկոյցը, որը մանրամասնօրէն ներկայացնում է Արցախում տեղի ունեցած իրադարձութիւնները՝ 2020-2023 թթ.:

Լրագրողական հանրոյթ

Մեզ համար ներկայումս որոշակիօրէն անբարենպաստ է նաեւ միջազգային տեղեկատուական միտումները: Մի կողմից ազրայէճանական զեղծարարութիւնները, միւս կողմից՝ խաղաղութեան պատրանքների միջազգային լրատուական դերւեւորումներն ու հանրահռչակումները, խոչընդոտներ են ստեղծում Հայաստանից առարկայական տեղեկատուութեան միջազգային սփռման համար: Այս առումով, կարելու է, որ սփիւռքեան համայնքներում ձեւաւորուեն օտարազգի լրագրողների հարթակներ, որոնք հետաքրքրուած են մեր հարցերով: Այս տեսանկիւնից կարելու է նաեւ տեղերում մտօնադաշտութիւնը, ինչպէս նաեւ՝ դէպի Հայաստան լրագրողական այցելութիւնների կազմակերպումը:

Էջիմենիք շրջանակներ

Սա թերեւս գործունեութեան իւրայատուկ ոլորտ է, որտեղ առանցքային դերակատարները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է եւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, ինչպէս նաեւ՝ յարանուանութիւնները, այնուամենայնիւ, այնպիսի էջիմենիք շրջանակներ, ինչպիսիք են Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը եւ Եւրոպական եկեղեցիների ընկերեքը, աշխատանքի բաւական դաշտ կայ՝ բնականաբար, առանց դարաբաղաւազրպէճանական հակամարտութիւնը ներկայացնելու որպէս միջկրօնական հակամարտութիւն, ինչն իրականում էլ այդպէս չէ:

Պատահական չէ, որ մայիսի վերջին ԵՀԿ-ն, համախորհուրդ Մայր Աթոռի հետ, Պեռնում միջազգային պատկառելի համաժողով էր կազմակերպել՝ նուիրուած Արցախում հայկական ժառանգութեանը: «Կրօնի ազատութիւն. հայ հոգեւոր, մշակութային եւ պատմական ժառանգութեան պահպանութիւնը Արցախում» խորագիրը կրող համաժողովը անդրադարձել է Արցախում հակամարտութեան հետեւանքներին, մասնաւորապէս՝ հայկական մշակութային ժառանգութեան, արցախահայութեան իրաւունքների եւ հետագայ անվտանգութեան հիմնահարցերին:

Առանձին պետութիւններ

Ի հարկէ առանձին պետութիւնների հետ աշխատանքը միջազգային ասպարեզում դարաբաղեան հիմնասիւնորի միջազգայնացման տեսանկիւնից կարեւորագոյն նշանակութիւն ունի, քանի որ միջազգային յարաբերութիւնների հիմնական դերակատարները հենց պետութիւններն են, եւ յաճախ միջազգային որեւէ նախաձեռնութեան յետեւում առանձին պետութիւն կամ պետութիւններ են կանգնած: Այս առումով, աշխատանքները պէտք է շարունակել ինչպէս մեզ հետ աւանդաբար ջերմ յարաբերութիւններ ունեցող պետութիւնների, այնպէս էլ աւելի բարդ երկրների հետ:

Չուիցերիոյ հետ աշխատանքը, հաշուի առնելով այս տարուայ գարնանը զուիցերիական խորհրդարանի՝ պարտադիր կատարման ենթակալ որոշումը, որով գործադիր իշխանութիւնը պարտաւորում էր միջազգային **Ֆորում** կազմակերպել՝ ի թիւս այլնի քննարկելու արցախահայութեան վերագործի իրաւունքի իրացումը, շարունակում է մնալ անկիւնաքարային: Առ այժմ հԵՆց «Լեռնային Ղարաբաղի խաղաղութեան զուիցերիական նախաձեռնութիւնն» է, որ կարող է որոշակիօրէն փոխարինել լուծարուած Մինսքի խմբին եւ դառնալ միջազգային հարթակ՝ արցախահայութեան իրաւունքների իրացումը քննարկելու համար: Ուստի կարելու է, որ հնարաւորինս մեծ թուով պետութիւններ իրենց սատարումը յայտնեն այս նախաձեռնութեանը:

Հիմնուելով Պեճիքայի, Ֆրանսայի, Հոլանտայի, Զանատայի եւ այլ երկրների ինչպէս օրէնսդիր, այնպէս էլ գործադիր իշխանութիւնների դիրքորոշումների վրայ, այս երկրների օրինակով պէտք է որպէս պետութիւններից եւս ակնկալել նմանաբնոյթ դիրքորոշումներ՝ արցախահայութեան վերագործի իրաւունքի իրացման ընդհանուր պարունակում:

Վերջերս հետաքրքիր երկու զարգացումներ են տեղի ունեցել նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներում եւ նոյնիսկ Մեծն Բրիտանիայում: Նախ՝ օգոստոսի կէտերին ԱՄՆ արտաքին գործերի նախարարութիւնը իրապարակեց Ազրայէճանում մարդու իրաւունքների վերաբերեալ 2024 թ. զեկոյցը, որտեղ շատ առարկայական կերպով նշուած էր «Կամայական եւս ապօրինի սպանութիւնների, խոշտանգումների կամ անմարդկային վերաբերմունքի, կամայական ձեռքալալութիւնների եւ բանտարկութիւնների, ինչպէս նաեւ այլ երկրների քաղաքացիների նկատմամբ հետապնդումների մասին արժանաւատ տեղեկութիւնները»՝ ընդգծելով, որ Ազրայէճանի կառավարութիւնը՝ «Հի ձեռնարկել իրական քայլեր՝ պատասխանատուութեան ենթարկելու մարդու իրաւունքները խախտած պաշտօնեաներին»: Չեկոյցում նշուում է ՄԱԿ-ի խոշտանգումների դէմ կոմիտէի 2024 թ. յունիսի 5-ի զեկոյցը, որն արձանագրում է՝ «Ազրայէճանական զինուած ուժերի կողմից հայկական ծագում ունեցող ռազմագերիների եւ այլ պաշտպանուած անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական եւ մարդու իրաւունքների լուրջ խախտումները»: Վկայակոչում է նաեւ Freedom House-ի 2024 թ. նոյեմբերի 11-ի ուսումնասիրութիւնը, ըստ որի, Ազրայէճանը՝ «Իրականացրել է համակարգուած ռազմավարութիւն՝ 2020-2023 թթ. ընթացքում լիովին հայաթափելու Լեռնային Ղարաբաղը՝ հայ բնակչութեանը ենթարկելով յարձակումների, ահաբեկման, հիմնական իրաւունքներից եւ կենսապահովման պայմաններից զրկելու եւ հարկադիր տեղահանութեան նպատակով»:

Սա արդէն ԱՄՆ ոչ թէ օրէնսդիր, այլ գործադիր իշխանութեան դիրքորոշում է, որով, ըստ Էութեան, ընդունում է այն առարկայական իրակականութիւնը, որը թուում է, թէ վերջին ամիսների ընթացքում զոհաբերում է յանուն քաղաքական շահի: Այնուամենայնիւ, այս փաստերի ընդունումն ինքնին կարելու է հետագայ աշխատանքների համար:

Հետաքրքիր մի դրուագ էլ կապուած է Մեծն Բրիտանիայի դիրքորոշման հետ: Մասնաւորապէս Մինսքի խմբի փակման հարցով ԵԱՀԿ մշտական խորհրդի քննարկման ժամանակ ԵԱՀԿ-ում ՄԹ գործերի հաւատարմատար Ճեյմս Ֆորտը, ի թիւս այլնի, յայտարարել է. «Մեք նաեւ խրախուսում ենք Հայաստանի, Ազրայէճանի եւ ԵԱՀԿ-ի միջեւ շարունակական համագործակցութիւնը փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ոլորտներում, ներառեալ՝ վստահութեան ամրապնդումը, տարածաշրջանային կայունութեան եւ մարդու իրաւունքները»: Դիւանագիտական Նուրբ խօսքի տողաւանկն ակնյայտ է, որ ՄԹ-ն նոյնպէս գտնում է, որ մարդու իրաւունքների առնչուող հարցերը բաց են մնացել ընթացիկ բանակցութիւններից եւ համաձայնութիւններից:

Այսպիսով, վերը յիշատակուածը գործունեութեան մի քանի ուղղութիւններ են միայն, որոնցում պայքարը պէտք է հետապնդել խիստ անբարենպաստ այս ժամանակահատուածում դարաբաղեան հակամարտութիւնը զոնէ միջազգային յարաբերութիւնների օրակարգում պահելու համար:

ԿԱԶԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ...

Շարունակում 4-րդ էջին

ԱՔԵԼԻ ԼԱՅՆ ՏԱՐԱԾՔԸ

Վերոնշեալ քանի մը կետերն ու անպատաս-խան մնացող հարցականները (կրնայինք շարքը երկարել) եթէ անմիջականօրէն կապ ունին Իսրա-յէլ-պաղեստինցիներ տազնապին հետ, աւելի մեծ օղակ մը, օղակներ, կը տարածուին անոր շուրջ: Ընենք արագ թուարկում մը՝ արձանագրելով ու-շաղրութեան արժանի հարցականներ (հոս ալ պի-տի բաւականաւնք մասնակի ցանկով մը):

- Իսրայէլի հռչակած՝ «Աբրահամի ծրագիր»-ը ի՞նչ նոր տարածքներ պիտի գրաւէ եւ ինչպիսի՞ սպառնալիքներ, վտանգներ պիտի բերէ շրջակայ երկիրներուն, ներառեալ... Իրանին, որուն ձեւով մը ձիթենիի ծիւղ կ'երկարէ Թրամփ: Զէ մոռցուած, որ ան մօտիկ անցեալին ո՛չ միայն ամբողջական զօրակցութիւն կը յայտներ պաղեստինցիները ջարդող Իսրայէլի կառավարութեան, այլ նաեւ քա-ջալեր եղաւ Իրանի վրայ իսրայէլեան յարձակու-մին, միաժամանակ հասկցուցած է, որ նման ճա-կատումներու կրկնութեան պարագային իր կեց-ւածքը պիտի չփոխէ:

- ՍՈՒՐԻՈՏ Եւ ԼԻԲԱՆԱՆԻ նման դրացիներու հանդէպ իսրայէլեան թշնամական կեցուածքն ու յարձակումները, հողեր խլելու վարքագիծը պիտի զսպուի՞ն «Միջին Արեւելքը խաղաղութեան նոր արշալոյսի առջեւ է» խոստումներով: Կազայի քանդումն ու Նախճիրները այնքա՛ն ահաւոր էին, որ յաճախ ակնելի թողուցին Լիբանանի եւ Սու-րիոյ ճիչերը, երբ իսրայէլեան օդուժն ու բանակնե-րը ոտնակոխեցին բացայայտ կամ լուռ համաձայ-նութիւններ, ու յստակ է, որ Իսրայէլ չէ հրաժարած նա՛եւ դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք տարածուե-լու ծրագիրներէն:

- ԻՐԱՔ-ը, որ առերեւոյթ հեռու է իսրայէլեան յիշեալ ծրագիրներէն, իր գլխավերեւին կախուած կը տեսնէ թրջական պատուհասը, որ այլապէս կախուած է նաեւ Սուրիոյ հիւսիսային գօտիներուն վերէւ: Եւ ի՞նչ զուգորդութիւն: Թրամփի խաղաղա-սիրութեան քայլերուն մասնակիցի պատմութեանով Շարմ Շէյխ վազած Երտողանը Սուրիոյ նկատ-մամբ կը վարէ այն քաղաքականութիւնը, ինչ որ Իսրայէլ կ'ընէ այդ երկրին դեմ՝ հակառակ «Աբրա-համի ծրագիր»-ին մերձեւնալու Սուրիոյ նոր իշխա-նութիւններու տրամադրութեան: Ակնբերէ է նաեւ, որ Նոյն ճաշատեղանը կը մատուցուի Լիբանանին, ուր որոշ խանդավառութիւն ստեղծուած է (Իսրա-յիլի անվերապահ զօրակից) Ուաշինկթընի հովա-նաւորչութեան տարածումին թելերով ու այդ գի-ծին դեմ կանգնողները նահանջի մասնէլու ճիգե-րուն լոյսին տակ...

- Կարկինին մատիտը կը հասնի նաեւ Թուրքիա-Ազրայէճան գօտիին: Բացայայտ է, որ անոնք յենելով իրենց ռազմավարական եւ առեւտրական գործընկերութեան խաղաթուղթերուն՝ կ'աշխա-տին նոր շահեր ապահովել ո՛չ միայն Կովկասի, այլ նաեւ աւելի լայն տարածքներու մէջ: Ուշագրաւ էր Ազրայէճան-Ռուսիա լարուածութեան մեղմա-ցումը, իսկ Ռուսիոյ հետ Թուրքիոյ պաղ-տաք յարաբերութիւնները, խաղերը երկար ճամբայ կտ-րած են: Ասոնք բազմաճիւղ այլ վտանգներ կը ստեղծեն թէ՛ Դայաստանի շրջակայ գօտիին (սկսե-լով Իրանէն), թէ՛ անշուշտ աւելի հեռու՝ մինչեւ Եւ-րոպա եւ Ասիա համսող շրջաններու մէջ (Յնդկաս-տան, Չինաստան): Այս գիծերուն վրայ արդեօք ո՞ր կը մտնէ «Չանգեզուրի միջանցք»-ին տիրա-նալու անոնց հետամտութիւնը, կամ՝ Փաշինեանի փայփայած (ցնորական) «խաղաղութեան խաչմե-րուկ»-ը: Բնականաբար կարելի չէ անտեսել նաեւ այն երեսը, որ Ազրայէճանի (հետեւաբար Թուրքի-ոյ եւ Փաքիստանի) դեմ մեր բողոքներն ու պահան-ջատիրութիւնը բանիւ եւ գործով դուրս կը նետու-ին Երեւանի իշխանաւորներուն օրակարգէն, ու Թուրքիա կ'աշխատի քանի մը թռչուն մէկ քարով որսալ... Ի հեճուկս մեր շահերուն, քաջալերող գի-նակիցներ կը գտնէ, անոնց վրայ կ'աւելցնէ ԶԴ-ա-կան վարչախումբը. Թուրքիան ու Ազրայէճանն ալ կ'աշխատին իրենց ճիտն վար ձգել ցեղասպանի տիտղոսը... Վաղը զո՞վ պիտի այպանենք, եթէ մեր արդար պահանջներուն դիմաց, սկսելով Պաքուի մէջ կեղծիքներով դատուողներու տունդարձէն եւ Արցախի վերատիրացումէն, աւելի՛ եւս խցուին մի-ջազգային ականջները...

Եզրակացնենք. Կազայի պատերազմը աւար-տած ըլլալու յայտարարութիւններն ու իրականա-ցած դրական քայլերը ողջունելի են անկասկած, կը բանան յուսատու պատուհաններ, որոնց պահպա-նումն ու նորերու բացումը կը պահանջեն ձե-ական եւ ժամանակաւոր հաւաստիքներ տնդին երթալ, մանաւանդ՝ կամք, որ սկստած երթը մնայ անդամնալի, իր համապատասխան արձագանգը ունենայ ո՛չ միայն Միջին Արեւելքէն Կովկաս ու Եւ-րոպա (Ուքրաինա եւ դրացիներ) տարածուող գօ-տիներուն, այլ նաեւ արինաւիտերութեան այլ ծովե-րուն մէջ, այլ խօսքով, վերականգնել այն տրամա-բանութիւնը, որ աւելի քան 30 տարի առաջ որոշ մեղմացումի տարաւ գերուժերու միջեւ լարուածու-թիւնը, բանդեց Պերլինի պատը:

13 հոկտեմբեր 2025

Ի ԶՈՒՐ ԿԸ ՀՆՉԵՆ...

Շարունակում 3-րդ էջին

հեռու մնալու օտարամոլութենէ եւ ձերբազատելու յունարենի, պարսկերե-նի, ասորերենի ազդեցութենէն:

Իրօք, ի՞նչ կարելի է կոչել Թարգ-մանչաց սերունդը, եթէ ոչ՝ յեղափոխա-կաններ, որոնք ապաւինելով իրենց հայեցի նկարագրին, դիմագիծին, կազմաւորումին, ուխտին եւ աներեր կամքին, նետուեցան մարտի դաշտ՝ պաշտպանելու ազգային, հոգեւոր ըմբռնումներն ու արժեւամակարգը:

Իսկ հետագայ դարերուն Ոսկեդարի աւանդը ապրեցաւ նորովի փայլք, երբ հայ ժողովուրդը ծնունդ տուաւ տիտան հոգեւորականներու՝ յանձնիս Ներսէս Շնորհալիի, Անանիա Շիրակացիի, Նարեկացիի ու շատերու, որոնց ստեղ-ծագործական միտքն ու հաւատամքը ուժգնապէս բոցավառեցին ազգային երթը:

Ճիշդ է նաեւ այն, որ հայոց միջնա-դարը ապրեցաւ խաւարի ու քաղաքա-կան խեղճութեան ժամանակահատ-ւած, այդուհանդերձ, հայ մտածողու-թիւնը շնորհիւ անզուգական ու բաց-միտ հոգեւորականներու (Մխիթարե-ան հայրեր), հայրենասեր եւ իրաւ մտաւորականներու (Չարթօնք, Իրա-

ՕՐԱՏԵՏՐ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐ

●1506.- Վախճանում Ամենայն Դայոց Յովհաննէս Է. Աջակիր կաթողիկոսի, Կոստանդնուպոլսոյ մէջ: 1474-ին յաջորդած էր Սարգիս Բ. Աջատար կաթողիկոսին: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Աջը Աղթամարի կաթողի-կոսարանէն Եջմիածին վերադարձնելուն համար մեծարուած էր Աջա-կիր պատուանունով: Վախճանեցաւ Լեւհաստան ուղեւորութենէ վե-րադարձի ճամբուն վրայ:

●1820.- Շունդռ ռուսական բանակի հայազգի զօրավար Իվան (Յովհաննէս) Լազարեւի, Շուշիի մէջ: Ռուս-թրքական 1877-1878-ի պատերազմին ժամանակ գլխաւորեց Կարսի գրաւումը: Մահացաւ 1879-ին, Կեդրո-նական Ասիոյ մէջ:

●1830.- Շունդռ հրապարակախօս, գրագետ, բանասեր, պատմագետ եւ ման-կավարժ Մատթէոս Մամուրեանի, Իզմիրի մէջ: Մահացաւ 1901-ին, Իզմիր:

●1884.- Մահ տնտեսագետ եւ ելեւմտագետ, օսմանեան կայսրութեան ելեւմդ-տական Նախարարի տեղակալ, ապա՝ առեւտուրի, գիւղատնտեսու-թեան եւ հանրային շինութեանց Նախարար Յովհաննէս Չամիչի, Պոլ-սոյ մէջ:

●1957.- Մահ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գրական-հասարակա-կան գործիչ եւ հրապարակախօս Աւետիք Իսահակեանի, Երեւանի մէջ: Մնած էր 1875-ին, Գիւմրի:

●1957.- Մահ խմբավար Միքայէլ Թաւրիզեանի, Երեւանի մէջ: Մնած էր 1907-ին, Պաքու:

●1974.- Մահ բանաստեղծուի, թատերագիր եւ մանկագիր Վարսենիկ Աղասեանի, Երեւանի մէջ: Մնած էր 1898-ին, Նախիջեւանի ճահուկ գիւղը:

●2020.- Մահ դերասան Վանիկ Մկրտչեանի: Մնած էր 1950-ին, Արթիկ:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՍ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԳՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- Հացկա տակ - Կրկնուած բաղաձայններ:
- Արաբական մայրաքաղաք - Մեկնա կէտ:
- Նմանապէս այլ բաներ - Յոյժ, բաժնաւոր:
- Այբուբենէն - Մի ի թարգման թաւալապատակ հայերէն:
- Աստուած - Մեկուն դեմ բարիք նիւթ:
- Տառի մը անունը - Դրամանիչ մը:
- Անլուծելի - Պարզ տեսակ:
- Մակարոյժ միջատ - Չամբիկ - Մանկեռ, հողա կոշտեր փշրելու գործիչ:
- Շիճուկ, կիւթ - Կէս՝ պատրաստ:
- Արամազդի դուստրերէն - Անուրջ:
- Ձայնակից գիրեր - Օժանդակութիւն - Առատ:

ՈՒՐԱԿԱՅԵԱՅ

- Վարի ճարիտ - Ձերբալու լուծիւն:
- Սարմէնի երկրէն - Եղանակ:
- Եղանակաւորիչ մակար - Ելատ:
- Սուրճուկի, գոյանալ - Չուրթ:
- Կրկնուած բաղաձայններ:
- Վկայ խիղի Ուլիանովի յեղափոխական ծածկանունը - Լիբանանի քաղաքներէն:
- Կանացի օտար շաբաթաթերթ - Ուղիղ - Խաղաղութիւն մեկնող:
- Սատիկ սիրա հարիւ - Միացող ածույթ:
- Խորուզիւն, հարեմ:
- Իշխանաւոր - Չուրթի պրկոյ:
- Բերան փրցող խմոր - Զով:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

	3				5	2				8
3										
5										
7										
8										
9										
2										

Հորիզոնական եւ ուղղահայեաց թ շարքերով եւ սիւնակներով (ՅՁԹ) կազմուած գնացանց բաղկացած է իւրաքանչիւրը թ թաւալուի հաշուող թ բաժնիներ (ՅՁԹ): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր թաւալուի մէջ թուանշան մը գտնուել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ թ թաւալուի մէջ իւրաքանչիւր բաժնի ունենայ ձեւ թ թուանշաններ՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժնի մէջ: Այնպէս հաճաք՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ թաւալուիներուն մէջ գտնուում են:

ՆԱՆՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Բ	Ե	Դ	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Ձ
2	Դ	Ե	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Ձ	
3	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Դ	Վ	Ա	Ս	
4	Ե	Դ	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Ձ	
5	Դ	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Ձ		
6	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Դ	Վ	Ա	Ս	
7	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Դ	Վ	Ա	
8	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Դ	Վ	Ա	Ս	
9	Դ	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Դ	Վ	
10	Ե	Դ	Վ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Ձ	
11	Տ	Խ	Ա	Ս	Խ	Պ	Թ	Յ	Ձ		



ՄԽԻԹԱՐԵԱՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ՞

Վերջերս «Սքայ սփորթը Իթալիա»-ի հետ հե-տաքերական հարցազրույց ունեցավ հայկական ֆութբոլի պատմության ամենէն փայլուն աստղերէն Զենիթի Մխիթարեան, որ ինչպէս միշտ շատ հա-ս-գիստ ձեռով լուսաբանեց ամէն ինչ:

Պատասխանելով իր ապագային մասին հարցու-մի մը, ան ըսաւ. «Ես իմ աշխատանքիս մէջ կը ներդ-նեմ կիրք, սիրտ եւ ամբողջ ուժս: Եւ շատ հպարտ եմ իմ ասպարեզովս: Միայն հիմա է, որ լիովին կը գի-տակցիմ, թէ ինչի հասած եմ: Եւ ամէն ինչ կ'ընեմ լաւ ֆիզիքական պահելու եւ պահպանելու համար: Տա-րեշրջանի աւարտին մօտ կ'որոշեմ, թէ պիտի շարու-նակե՞մ թէ՞ ոչ»: Մխիթարեան պատմած է, որ 2019-ին իր գործավար Միւս Ռայոլային հետ ի՛նչ պատահած է լքելէ ետք Անգլիան:

«Այդ ժամանակ Ա. ՍԷ. Միլան կերորոնացած էր Շախթար Տոնցքի մարզիկ Թայսընի վրայ, եւ ես մտավախութիւն ունեի, որ ես կը դառնամ անոնց երկ-րորդ թիրախը: Այդ պատճառով ես ընտրեցի Ռոման՝ փնտռելով այն երջանկութիւնը, որուն մասին միշտ երազած էր: 5 օր ետք Արսենալ-Թորքենհամ մրցումէն ժամեր առաջ, Ռայոլա հեռաձայնեց ինծի՝ ըսելով, որ մրցումէն ետք պէտք է Իտալիա ծամբորդեմ՝ պայմա-նագիր ստորագրելու: Ռոմայի մէջ համակիրներուն սերն ու աջակցութիւնը աննկարագրելի էին: Ես այն-տեղ վերագտայ ֆութբոլ խաղալու հաճոյքը, ես ին-ծի ւաճի իտալացի զգացի», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչպե՞ս



պէտք է կազմուի ֆութբոլի իտեալ գերաստղը՝ ունե-նալով ամէն տեսակ յատկանիշ, ան բացատրեց. «Կատարեալ ֆութբոլիստը պէտք է ունենայ Ալֆոն-սօ Տելվիսի արագութիւնը, Լիոնել Մեսսիի սքանչելի տեսողութիւնը, Զինետին Զիտանի փոխանցումներու ճշգրտութիւնը, Զորիսթիանս Ռոնալտոյի ֆիզիքական պատրաստութիւնը եւ անոր անզուգական հարուա-ծը, ինչպէս նաեւ երկար փոխանցումներու վարպետ Տիվիտ Պեքիամի կարողութիւնը: Գնդակ խլելու հա-մար կատարեալ կ'ըլլար Զլոտ Մաքելեյլէն, իսկ վար-պետութեան բարձրագոյն դրսեւորման համար ան պէտք էր նմաներ Զաքարիին: Անոր ղեկավարման յատկանիշները պէտք է ըլլան անգիշելի՝ առաջնորդ ճոնի Թերրիի մակարդակին վրայ», աւելցուց ան:

«ՖՈՐՄԱԿԱ 1»

ԱՅՍ ՇԱՐԱԹԱՎԵՐՁԻՆ՝ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԿՐԱՆ ՓՐԻՆ


Այս շաբաթավերջին «Ֆորմիլա 1»-ի 19-րդ կրան փրին պիտի հիւ-րընկալէ Միացեալ Նա-հանգներու Թեքսաս Նա-հանգը: Օսթընի մէջ տեղի ունենալից այս կրան փրին, բոլորին կողմէ սիրուած եւ սպասուած մրցումն է, ուր աշխուժ երաժշտութեան մայրա-քաղաքը «Թեքսասի ոճ»-ով պիտի դրսեւորուի:

Ծիշդ է, որ Միացեալ Նահանգներու մէջ Մայե-մին եւ Լաւ Վեկանս ալ կը հիւրընկալեն կրան փրի-ներ, բայց Օսթընի մէջ տեղի ունեցող այս մրցու-մը միշտ ալ վարորդնե-րուն համար ուրախ, առանց ճնշումի, հանգիստ մրցում մը կ'ըլլայ, ուր ո՛չ Մոնաքոյի լուրջ տարագով մարդիկ կան, ո՛չ ալ «Երեւիլ սիրող մարդիկ», այլ պարզ գիւղական հասարակ մարդիկ, որոնք ծիաւոր-ներու նման հագուած կ'ըլլան «**ճիւնգ**» տափասներ՝ «քաուպոյ»-ի գլխարկներով:

Համակիրներն ալ միշտ քաջալերող եղած են բո-լոր մասնակիցներուն, որոնք այս կրան փրիին է, որ կը զգան, թէ իրապէս սիրուած են: Վարորդները կը նախընտրեն յաւելեալ օրեր մնալ Թեքսաս՝ վայելելու «ջիդեր հանգստացող» մթնոլորտը:

Անցեալ 5 հոկտեմբերին շահելէ ետք Սինկափորի կրան փրին, «Մերսեսես»-ի վարորդ Ճորճ Ռասըլ եւ իր խմբակից Զիմի Անթոնելլի երկարաձգեցին իրենց պայմանագրութիւնները եւ պիտի մնան գերմանա-կան խումբին հետ 2026-ին:

Այժմ յառաջիկայ տարեշրջանին համար միայն 4 ազատ աթոռներ մնացին, մէկը՝ «Ռետ Պուլ»-ի, եր-կուքը՝ «Ռէյսիսկս Պուլզ»-ի եւ մէկն ալ «Ալփին»-ի մօտ: Շատ հաւանական է, որ Իսաք Հաթթար ըլլայ «Ռետ Պուլ»-ի Մաքս Վերշթափընի խմբակիցը, մինչ



եռլեի Յունտա (այժմ՝ «Ռետ Պուլ») եւ Լիամ Լոսըն պիտի պայքարին «Ռէյսիսկս Պուլզ»-ի մէկ աթոռին համար՝ նկատի ունենալով, որ «Ֆորմիլա 2»-ի վա-րորդ Արվիտ Լինտալատ պիտի ըլլայ «Ռէյսիսկս Պուլզ»-ի նոր վարորդը՝ 2026-ին:

Ֆրանքօ Զոլափիկոսօ կրնայ մնալ Ալփին»-ի հետ՝ փեռ Կասիի հետ, բայց պահեստի վարորդ Փոլ Արոն կրնայ մեծ դեր ունենալ 2026-ին:

Նշենք, որ «Մաքլարեն» անցեալ կրան փրիին ետք դարձած էր աշխարհի խմբային ախոյեան, իսկ իր վարորդները՝ Օսքար Փիասթրի (336) եւ Լաւստո Նո-րիս (314), կը գրաւեն վարորդներու առաջին երկու դիրքերը: Վերջին 4 տարիներու աշխարհի ախոյեան Մաքս Վերշթափըն իր «Ռետ Պուլ»-ով բաւական բա-րելաւած է իր արդիւնքները՝ «Ռետ Պուլ»-ի հետ եւ ու-նի 273 կէտ:

ՆԷՅՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ Է ՎԵՐԱԳԱՌՆԱԼՈՒ ԵՒՐՈՊԱ



Պրագիլեան Սանթոս խումբի յառաջապահ Նեյ-մար պատրաստ է տեղափոխուելու «Սերի Ա.», ուր Ինթեր Միլանին ու ախոյեան Նափոլի հետաքրքըր-ւած են անոր ծառայութիւններով:

Ըստ «Ի. Եւ. Փի.Էս.»-ի, 33 տարեկան Նեյմար կ'ու-զէ ձմրան փոխանցումներու պատուհանի ժամանակ եւրոպա փոխանցուիլ, մասնաւոր այն անոր պայմա-նագրութիւնն ալ կը հասնի իր աւարտին՝ նկատի ու-նենալով, որ 2026-ի Մոնտիալին համար ան կ'ուզէ լաւագոյն վիճակին մէջ ըլլալ՝ Պրագիլի մարզիչ Զար-լօ Անչելոթիի ուշադրութիւնը գրաւելու համար:

Այս տարեշրջանին Նեյմար 2-1 մրցումներ կատա-րած է՝ նշանակելով 6 կոլ եւ կատարելով 3 Եսիսթ:

«ԵՈՒՆԻԹԻ ԵՈՒԹ ԶԱՓ»

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՓՈԽԱԽՈՅԵԱՆ



Նետերլանտներու մէջ տեղի ունե-ցաւ «Եունիթի Եուրօ քափ» 2025-ի մըր-ցաշարը, ուր 18 խումբեր իրենց մաս-նակցութիւնը բերին՝ ներկայացնելով իրենց երկիրները, որոնց կարգին՝ Հա-յաստանը:

Մրցաշարի օրերը այն է, որ իւրա-քանչիւր հաւաքականէ մասնակցին 7 զաղթական մարզիկներ 4 տեղացի մարզիկներու հետ, եւ պէտք է մասնա-կիցներուն 11-էն առնուազն 3-ը իգա-կան սեռին մաս կազմեն:

4-րդ անգամ ըլլալով կազմակեր-պուած այս մրցաշարը յաջողութիւն կը գտնէ «Եու. Է. Էֆ. Ա.»-ի եւ «Եու. Էս. Էջ. Սի. Սի.»-ի համագործակցութեամբ, ուր խմբային աշխատանքով մարդիկ կը քաջալերուին իրար միանալու՝ մօ-տեցնելով տարբեր մշակոյթներու պատկանող անհատներ՝ աշխատելու միասին:

Ֆինլանտա շահեցաւ աւարտակա-ն մրցումը՝ փենալթիներով պարտու-թեան մատնելէ ետք Հայաստանի հա-ւաքականը, արդիւնքը 0-0 աւարտելէ ետք:

Հայաստան իր բացման մրցումին ալ Նոյն արդիւնքը արձանագրած էր Ֆինլանտայի դէմ (0-0), ապա 5-0 ար-դիւնքով յաղթած՝ Պեճիքային: Յու-նաստանի հետ ալ սպիտակ հաւասա-րութենէ մը ետք, հաւաքականը հասաւ նաք-աութի հանգրուան: Զառորդ աւարտականին 2-1 արդիւնքով յաղթե-լէ ետք, Հայաստան 2-1 արդիւնքով յաղթեց Իրլանտայի հանրապետու-թեան՝ հասնելով աւարտական:

Աւարտական մրցումին Հայաստան 4-3 փենալթիներու արդիւնքով զիջե-ցաւ Ֆինլանտային: Մրցումը ղեկավա-րեց Նետերլանտներու միջազգային իրաւաբար ... Սերտար Կեօգիպիլյուք:

20 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ ՄՈՆԻԿԱԼ

ՄԱՐՈՔ ՀԱՍԱԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ

Երրորդ բերդապահ Ապտէլ Զարիմ Մետաաիի դաշտ ներկայացաւ 125-րդ վայրկեանին եւ զսպեց Ֆրանսայի 6-րդ փենալթին՝ օգնելով Մա-րոքի, որ հասնի երիտա-սարդներու Մոնտիալի աւարտականին:

Չիլիի մէջ տեղի ունե-ցող Մոնտիալի կիսաաւա-րտականին Մարոք պատ-մութիւն կերտեց՝ դուրս ձգելէ ետք Ֆրանսան՝ հա-նելով աւարտական, առաջին անգամ ըլլալով:

Մարոք աւարտականին պիտի մրցի Արժանթինի դէմ, որ դուրս ձգեց Զոլոմ-պին 1-0 արդիւնքով հասնելով 8-րդ աւարտականին:

Ֆրանսացի բերդապահ Լիսանտրու



Օլմեթա 32-րդ վայրկեանին բաւական անբախտ վիճակի մէջ գտնուեցաւ, երբ Մարոքի հարուածած փենալթին դպաւ բերդի սիւնին, ապա դպնալէ ետք Օլ-մեթային մտաւ Ֆրանսայի բերդին մէջ:

Շար.ը՝ էջ 8

ԵՐԿՈՒ ՀԵՐՈՍ՝ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՕՐԸ



Ֆութբոլի երեկոն ծանր էր հայկա-կան ֆութբոլին համար, երբ ազգային խումբը պարտութիւն կրեց Իրլանտա-յի մէջ (1-0), մինչ երիտասարդներու ազգային խումբը 5-1 արդիւնքով պար-տութիւն կրեց Իտալիային: Սակայն

Հենրի Աւագեան դարձաւ Իրլան-տայի ազգային խումբի գլխաւոր խո-չընդոտը: Կրկանը ըսել, որ 1-0 արդիւն-քը իր շնորհիւ էր, որ այդպէս մնաց: Եթէ անոր սքանչելի զգպումները չըլ-լային, արդիւնքը շատ աւելի բարձր կըր-



պահ մը մոռնալով արդիւնքները յայտ-նենք, որ այդ օրը նաեւ հպարտանալու առիթներ ստեղծեց:

Երկու բերդապահներ՝ Հենրի Աւագ-եան եւ Գոռ Մարտինեան իրենց իրենց դրսեւորեցին, իբրեւ հերոսներ՝ ցուցա-բերելով բարձր մակարդակի խաղ, որ յարգանքի արժանի է:

Նար ըլլալ: Աւագեան 5 անգամ կրցաւ զսպել հարուածներ, իսկ 3 պարագա-ներու ան աներեսակայելի ձեռով վըս-տահ կոլերէ փրկեց իր բերդը: Ան ոչ միայն կը պաշտպանէր իր բերդը, այլեւ իր խմբակիցներուն կ'ոգեշնչէր ջանձ-նուիլ եւ պայքարիլ:

Շար.ը՝ էջ 8

ՌՈՒՏԻԿԸՐԻ ԴԻՐՔԸ՝ ՎՏԱՆԳՈՒԱԾ



Ռեալ Մարտիտի գերմանացի յետսապահ Անթո-նիօ Ռուտիկըր շատ հաւանաբար յաջորդ ամրան լքէ աւելումը:

Ըստ «Պիլտ»-ի, Ռեալի մարզիչ Զապի Ալոնսօ կը կարծէ, որ Ռուտիկըր բաւարար կայունութիւն չունի եւ յաճախ կը վիրաւորուի: Ալոնսօ կը նախընտրէ կերպարի յետսապահ դիրքի վրայ տեսնել Էտիեր Միլի-թաօ - Տին Հաուսըն գոյգո:

Բացի աստէլ, Ռուտիկըրի բարձր աշխատավարձը Ռեալ Մարտիտի ղեկավարութիւնը կը նկատէ աւե-լորդ, մասնաւոր եթէ ան պահեստի մարզիկ նկատ-լի: 32 տարեկան Ռուտիկըր այժմ վիրաւոր է եւ մին-չեւ ղեկկոմբեր հեռու պիտի մնայ դաշտերէն:

Անթոնիօ Ռուտիկըր սկսած է Շլոթթֆարթի հետ, ապա 2 տարեշրջան խաղալէ ետք Ռոմայի հետ, 5 տարեշրջան ելոյթ ունեցած է Լոնտոնի Զելսիի շա-պիկով: Ան 2022-ին միացած էր Ռեալին, որուն հետ կատարած է 96 մրցումներ՝ նշանակելով 2 կոլ: Ան Գերմանիոյ ազգային խումբին հետ 81 մրցում կա-տարած է եւ նշանակած 3 կոլ:

ՖԻՆԱՆՍԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԶԱՅՏՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԶԱՆՈՂԵՑԱԻ

Ֆրանսայի Ազգային ժողովին կողմէ Սեպասթիան ԼըԶորնիի նորակազմ կառավարության անվստահության յայտնելու փորձը ձախողեցավ:

Ազգային ժողովի նախագահ Եսել Պրոն-Փիվե քուեարկությունն ետք յայտարարեց. «Անհրաժեշտ մեծամասնությունը չապահովվեցավ, եւ բաժնեկցությունը մերժվեցավ»:

Կ ա ռ ա վ ա ռ ի թ ե ա ն հրաժարականին արմատական ձախի առաջարկին թեր ըուեարկեց խորհրդարանի 577 անդամներն 271-ը, իսկ ծայրայեղ աջի առաջարկին՝ միայն 144 անդամներ: Անվստահության քուեի ընդունման համար անհրաժեշտ էր 289 քուե:

Նախքան քուեարկությունը, Ազգային ժողովը քննարկեց կառավարության անվստահություն յայտնելու երկու առաջարկներ, առաջինը ներկայացրած ծայրայեղ աջին կողմէ, իսկ երկրորդը՝ արմատական ձախի կողմէ: Ընկերվարական կուսակցությունը



երեքշաբթի օր կառավարությունն իր հիմնական նկատած հարցերուն, որոնցմէ է վարչապետին կողմէ հանգստեան կոչման 2023 թուականին հրապարակուած դրութեան չեղեալ յայտարարման նկատմամբ երաշխիքներ ստանալէն ետք յայտարարեց, որ կառավարութեան անվստահություն յայտնելու երկու առաջարկներն ոչ մէկուն կը զօրակցի:

Նշեալ օրէնքի առկախումը վերջին շաբաթներուն Ֆրանսայի մէջ քաղապարական զուգործութիւններու առանցքն էր:

2023-ին որդեգրուած այդ օրէնքը Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնի երկրորդ նստաշրջանի առանցքային օրէնքն է, որուն հիմամբ հանգստեան կոչման տարիքը կը բարձրացուի 64-ի:

ԹՐԱՄՓ. «ՀՆԳԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ...»

Շարունակուած Ա. Էջէն

Միւս կողմէ, Թրամփ նշեց. «Կը մտածեմ վենեզուէական հողերուն վրայ գործել օդային յարձակումներ, որոնք կը թիրախաւորեն թմրեցուցիչի աւազակախումբերը»:

Անդրադառնալով Վենեզուէայի ծովափին մօտ նաւերու ռմբակոծման՝ Սպիտակ տան ղեկավարը յայտնեց, որ երբ նաւերը թմրեցուցիչներով բեռնուած են, անոնք «օրինական թիրախներ են»:

«Պլումպըրկ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Միացեալ Նահանգներու նախագահի Զննդկաստանի ռուսական քարիւղ գնելէ դադրելու մասին յայտարարութիւնն ետք քարիւղի համաշխարհային գիները բարձրացած են:

ՄԸԹՐԻ. «ԼԻԲԱՆԱՆՆ ...»

Շարունակուած 2-րդ Էջէն

Իսկ Իսրայէլի հետ խաղաղութեան համաձայնութեան կնքումը սեղանին վրայ չէ», ըսաւ ան՝ նշելով. «Սակայն ասիկա չի նշանակեր, թէ Իսրայէլի հետ տեւական պատերազմի մէջ պիտի ըլլանք, որովհետեւ Լիբանան կառչած է զինադադարի համաձայնութեան, եւ որպէսզի զինադադարը տեւական ըլլայ, կրնայ արգելք չըլլալ, որ այլ համաձայնութիւն մը կնքուի, եթէ այդ մէկը անհրաժեշտ ըլլայ»:

Պատասխանելով այն հարցումին, թէ Լիբանանի փոխանցուած է, թէ Իսրայէլ մտադիր է Կազայի համաձայնութիւնն ետք մագլցում կատարել՝ ան ըսաւ. «Այդ առնչութեամբ ոչինչ փոխանցուեցաւ, եւ կը կարծեմ, թէ Իսրայէլ գոհ է ներկայ իրավիճակէն, որովհետեւ երբ ուզէ եւ ուր որ ուզէ կը հարուածէ: Սակայն Իսրայէլի հետ ոչինչ հաստատու է»:

Պատասխանելով այն հարցումին, թէ գէնքի մենաշնորհման որոշումի գործադրութիւնը ներկայիս սառեցուած է, սպասելով Իսրայէլի յանձնառութիւնները յարգելուն՝ Մըթրի յայտնեց. «Այս թղթածրարին մէջ ոչինչ սառեցուած է, եւ պետութեան վերահսկողութիւնը իր բոլոր հողերուն վրայ տարածելու աշխատանքը բանակը կը կատարէ: Իսկ, թէ ե՞րբ պիտի աւարտի, ատիկա կախեալ է բանակի պայմաններէն եւ գետնի վրայ անոր աշխատանքէն, եւ հաստատ, որ բռնագրաւումի եւ զինուորական գործողութիւններու շարունակումը լիբանանեան բանակի առաքելութիւնը կը բարդացնէ»:

«Չեցի մենաշնորհման որոշումը քաղաքացիական պատերազմի ծրագիր չէ, որովհետեւ ոչ ոք կ'ուզէ բանակին դէմ կանգնիլ, եւ ո՛չ ալ բանակը կ'ուզէ ռեւէ մէկու հետ բախում ունենալ», նշեց փոխվարչապետը:

ՄԱՐԲ ՀԱՍԱԻ ...

Շարունակուած 7-րդ Էջէն

Մարոք առաջին կիսախաղին շատ աւելի վտանգաւոր էր եւ առիթներ ստեղծեց, բայց արդիւնքը մնաց 1-0: Բ. կիսախաղին Ֆրանսա փոխադարձեց շնորհիւ Լուքաս Միշալի: Արդիւնքը մնաց անփոփոխ: 64-րդ վայրկեանին Մարոքի հիմնական բերդապահը վիրաւորուեցաւ եւ փոխարինուեցաւ:

Ինչպէս նշեցինք, 125-րդ վայրկեանին դաշտ ներկայացաւ Մարոքի 3-րդ բերդապահը, որ աւելի ուշ հերոս դարձաւ:

Աւարտականին Արժանթին, որ իր բոլոր մրցումներն ալ յաղթանակներով աւարտեց, պիտի փորձէ իր 7-րդ տիտղոսը շահիլ, նոյնիսկ առանց Պայեր Լեւերքուզըի մարզիկ Զլատսոի Էչելմերիի եւ Ռեալ Մատրիտի մարզիկ Ֆրանքո Մասթանթինոյի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳԵՌՈՐ ՓՕԼԱՏԵՍԻ լ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարւի կիրակի, 19 հոկտեմբեր 2025-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹՐԱՄՓ. «ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԷՋ ԵՆ»

Միացեալ Նահանգները Չինաստանի հետ առեւտրական պատերազմի մէջ են: Այս մասին Սպիտակ տան մէջ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարած է Միացեալ Նահանգներու նախագահ Տաւրիտ Թրամփ:

Պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք Չինաստանի հետ յարաբերութիւններուն մէջ կացութիւնը կրնա՞յ առեւտրական պատերազմի հասնիլ, Սպիտակ տան ղեկավարը ըսած է. «Մենք արդէն առեւտրական պատերազմ կը վարենք»:

Նախապէս Չինաստանի առեւտուրի նախարարութեան պատասխանած էին, թէ Փեքինը թէ՛ բանակցութիւններու, թէ՛ ալ առեւտրական պատերազմի պատրաստ է:

Միացեալ Նահանգներու նախագահ Տաւրիտ Թրամփ նաեւ յայտարարեց. «Յնդկաստանի վարչապետը յայտնեց, որ իր երկիրը ռուսական քարիւղ պիտի չգնէ, եւ այժմ պետք է Չինաստանը մղենք ռուսական քարիւղ գնելէ դադրելու»:

Ուաշինկթընի մէջ Չինաստանի դեսպանատունը արձագանգելով Թրամփի յայտարարութեան ընդգծեց. «Չինաստան կը մերժէ որեւէ տեսակի հարկադրանք կամ ճնշում»:

Չինաստանի դեսպանատան բանբեր Լիու Պին-կիու նշեց. «Չինաստան կտրուկ կերպով կը մերժէ ապօրինի միակողմանի որեւէ պատժամիջոց, արդարադատական մասնագիտութեան ծիրի որեւէ ընդլայնում, եւ որեւէ ձեռի հարկադրանք կամ ճնշում»:

ՍԱԼԱՄ ՍԱՅՏԱ ԱՅՑԵԼԵՑ

Շարունակուած Ա. Էջէն

Սայտայի մէջ Մաքսստ իսլամական բարեսիրական միութեան նախագահ Ֆայեզ Պըզրի դպրոցին բակին մէջ վարչապետին ի պատիւ ճաշկերոյթ կազմակերպեց:

Սալամ Սայտա իր այցելութեան ընթացքին խօսք մը արտասանելով նշեց. «Եկանք հաստատելու, որ պետութիւնը ներկայ է, եւ մտիկ ըրինք քաղաքի զաւակներու մտահոգութիւններուն»՝ շեշտելով. «Կառավարութեան մէջ մեր ծրագիրը պետութեան վերականգնումն է, եւ ատիկա կը սկսի մարդոց վստահութիւնը շահելով: Մենք կարիքը ունինք ապահովական ուժերու եւ բանակի անդամներուն թիւը բարձրացնելու, մասնաւորաբար հարաւէն ՖԻՆԻԼ-ի ուժերու հեռացման սկիզբի լոյսին տակ»:

«Ամիսներ ի վեր կ'աշխատինք զինուորական եւ ապահովական ծառայութիւններու աշակցութեան միջազգային խորհրդածողովի մը վրայ, եւ Աստուած ուզէ ատիկա շուտով կ'իրա-

կանանայ, եւ մենք կը կարողանանք պահանջուածին մեծ մասը ապահովել», նշեց վարչապետը:

«Վերաշինութեան գործողութեան մէջ կծծիութիւն չենք ըներ, սակայն մեր կարելիութիւնները շատ քիչ են: Վըստահ եմ, որ շուտով պիտի յաջողինք վերաշինութեան ու տնտեսութեան առողջացման եւ բանակի ու ապահովական ուժերու աշակցութեան շուրջ երկու միջազգային խորհրդածողութիւններ գումարելու» բարգաւաճման եւ վերաշինութեան աշխատանքին ձեռնարկելու համար: Այդ ատեն պետութիւնը բարգաւաճման եւ վերակառուցման ծրագիրներու ճամբով աւելի ներկայ պիտի տեսնէ», նշեց վարչապետը:

«Մեր ծրագիրը մէկ է՝ պետութեան վերականգնումը: Ո՛չ դրամ ունինք, ո՛չ ալ միջոցներ: Միայն մարդոց վստահութիւնը ունինք, եւ մենք զայն պիտի պահենք միայն, երբ անոնց մտիկ ընենք եւ անոնց պահանջները բաւարարենք», յայտարարեց Սալամ:

ԲՐԻՏԱՆԻԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Մենք Յայաստանի եւ Ազրայէճանի հետ մեր յարաբերութիւնները կը բարձրացնենք մինչեւ առեւտուրի, անվտանգութեան եւ պաշտպանութեան



ուղղուներուն մէջ ռազմավարական գործընկերութիւն: Յաշուի առնելով արձանագրուած յառաջընթացը՝ կը կարծենք, որ 1992 թուականի ԵԱՀԿ-ի գէնքի մատակարարման արգելքը այլեւս արդիական չէ», նշուած է յայտարարութեան մէջ:

Կը նշուի նաեւ, որ Բրիտանիան պատրաստ է համագործակցելու երկու երկիրներուն՝ Միացեալ Նահանգներու, Եւրոպական Միութեան եւ այլ գործընկերներու հետ՝ շրջանային կայունութեան աջակցելու համար:

Նախապէս Տաւրի Յայաստանի Յանրապետութեան արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեան Երեւանի մէջ կատարած էին Յայաստան-Բրիտանիա ռազմավարական երկխօսութեան երկրորդ փուլը: Անոնք համաձայնած էին յարաբերութիւնները ամրապնդելու եւ հասցնել ռազմավարական գործընկերութեան մակարդակի:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Նախանցեալ օր իրաւապահները գործողութիւններ իրականացուցած էին Յայ առաքելական եկեղեցւոյ Արագածոտնի թեմին մէջ, թեմի առաջնորդը եւ երկու այլ անձեր ձերբակալուած էին:

Մայր աթոռ Ս. Էջմիածինը այս գործողութիւնները որակած է ապօրինի քրեական հետապնդումներ, որոնք իշխանութիւններուն «իրաւորած հակաեկեղեցական համակարգուած արշալի» հերթական դրսեւորումներն են:

ՆԱՆԱԳԱՀ ԱՌԻՆ. « ԼԻԹՆԻԷՆ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Լիբանան կապի մէջ է եղբայրական ու բարեկամ պետութիւններուն հետ» համակարգելու համար հարաւէն միջազգային ուժերու հեռացումին յաջորդող փուլը՝ երաշխաւորելու համար շրջանին մէջ անվտանգութիւնն ու ապահովութիւնը», ըսաւ հանրապետութեան նախագահը:

ՖԻՆԻԼ-ի ուժերուն իրամասնատարը իր կարգին նախագահը դրաւ միջազգային ուժերու 2027 թուականի սկիզբը հեռանալ սկսելու ընթացքին որդեգրելիք քայլերուն մթնոլորտին մէջ:

ԵՐԿՈՒ ՀԵՐՈՍ ...

Շարունակուած 7-րդ Էջէն

Երիտասարդներու (21 տարեկանէն վար) ազգային խումբին արդիւնքը շատ աւելի մեծ էր (1-5), բայց Գոռ Մատինեան դարձաւ այն խաղողը, որ արժանացաւ բոլորի յարգանքին: Ան 5 ստոյգ առիթներ ազատեց իր բերդը եւ փենալթի մըն ալ զսպեց: Մատինեանի երկրորդ փենալթին է, որ ան կը յաջողի զսպել գտումի այս մրցումներուն: Ստացած կոլերը իտալացիներուն մեծ ճնշումին հետեւանքով էին, բայց առանց Մատինեանի հերոսութիւններուն, շատ աւելի վատ կրնար ըլլալ արդիւնքը: Անոր հանդարտ եւ կեդրոնացած, բայց միեւնոյն ժամանակ պայքարող ոգին ցոյց տուաւ, որ Յայաստանի բերդապահի դիրքին վրայ արժանի փոխարինող կը պատրաստուի:

Նոյնիսկ պարտութիւններու օրերուն, հայկական ֆութպոլը կրնայ իպարտութեան առիթ տալ: Աւագեանն ու Մատինեանը յիշեցուցին, որ բերդապահը պարզապէս խաղող չէ: Ան վերջին պաշտպանողն է, ուր ամէն բան կ'որոշուի երկվայրկեաններու ընթացքին, եթէ նման մրցումները շարունակուին, կարելի կ'ըլլայ վստահ ըլլալ, որ հայկական բերդը ապագային կը մնայ ապահով ձեռքերու մէջ:

Իրականութեան մէջ, 14 հոկտեմբերը պատմական օր մըն էր ամբողջ հայկական ֆութպոլին համար: Ժիշո 33 տարի առաջ 1992-ին, Յայաստանի ազգային խումբը իր պատմութեան առաջին միջազգային մրցումը ունեցած էր անկախութիւն ստանալէ ետք:

Էդուարդ Մարգարովի ղեկավարութեամբ ազգային խումբը իր առաջին ելոյթը ունեցաւ պատմական «Յրագրան» մարզադաշտին վրայ, ուր բարեկամական մրցում մը ունեցաւ Մոլտովայի հետ (0-0):

Յայաստանի ազգային խումբը դաշտ ներկայացած էր հետեւեալ կազմով. Զարութիւն Աբրահամեան, Սարգիս Յովսէփեան, Երուանդ Կրպաշեան, Վարդան Խաչատրեան, Սամուէլ Կոստանդեան, Սարգիս Կարապետեան, Արամայիս Տօնյեան, Արտաշէն Ադամեան, Մկրտիչ Յովհաննեսեան, Արմէն Շահգեղեան եւ Արսէն Աւետիսեան: